

# Արև

ԱՄԱՍԱԳԻՐ  
ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱ ԱՐ - ԲԱԼԱԽԻՒԹ

ԳՐԱԶՈՒՄԱԳԻՐ ՀԵՇՎԱՐԱԿԱՆՈՒՅՆ ՀԱՅՈՎԱՐԴԻՐ ՀԱՅ ՊԱՏՐԻԳՈՒՅՆ



451 - ԾՈՐԵԼՐԵԱԿԱՆ ՏՐՈՒ - 1951  
Ճ. ԳՐԵՎԱՐԱՐ ԱՐԵՎ ԳՐԱՎՈՐԱՅԻ ԶՈՐԱՎՈՐԱՅԻ ԱՐԵՎ  
ՀԱՅՈՎԱՐԴԻՐ ԵՒ ՀԵՇՎԱՐԱԿԱՆՈՒՅՆ

# ՅՈՎՈՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

---

ԵՐԵՒ

<b>ԽՄԲԱԴՐԱԿԱՆ</b>		
— Վերադարձ Ս. Արուռ Նույրակ՝ Գեր. Տ. Սերովիք Վրդ. Մանուկեանի.	289	
Խոյսկոպոսական ձեռնադրութիւն և օծում.	293	
<b>ԿՐՈՆԱԿԱՆ</b>		
— Անմահութեան ապահովութիւնը.	X	295
<b>ԲԱՆԱՍՏԵՂՃԱԿԱՆ</b>		
— Թէ մոռացայց զեզ... — Վեցեակներ.	ԱՐԻՎԱՐԴ Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	298 301
<b>ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ</b>		
— «Ավի դաշնագիր»ը Գրիգոր Դարանաղցիի «Ժամանակագրութեան» մեջ. — Խորհնացի, Եղիչէ և Հ. Ներսէ Ալինեան.	ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԵՆ	302 304
<b>ԿՐՕՆԱ-ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ</b>		
— Աւանդաբարութիւն մը Մաղաքիայի Գրին ուրց.	ԱՆՈՒԾԱԿԱՆ ԱԲԴ. ԶՊՉԱՆԵԱՆ	308
<b>ՊԱՏՄԱԿԱՆ</b>		
— Եղիչէ պատմագիր և Վարդանանց պատե- րազմը (8).	ՊԱՐԳԵՒ Վ.ՐԴ. ՎՐԹԱՆԵՍԵԱՆ	311
<b>ՊԱՏՄԱ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ</b>		
— Պատմութեան բնոյրը, Բնազանցականը և Պատմականը.	ԶԱԻՔՆ ԱԲԴ. ԶԻՆՉԻՆԵԱՆ	315
<b>Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՄԵՆ</b>		
— Հեռազիւներ. — Եկեղեցականի - Բեմականի. — Պատօնականի.	317 317 318	
<b>Տիգրինէ</b>		
— Հանգիս Գեր. Տ. Արտաւզդ Ս. Արեւադ. Սիւրմեանի. — Տիկին Վերգին Գեօրգիեան.	318 320	

**ՍԻՌՆԻ Տարեկան բաժնեգիրն է՝ բոլոր Երկիրներու համար՝ Անգլ. Նիլին 15**

*Redaction of the Armenian Monthly SION*

*Armenian Patriarchate,*

*P. O. B. 4001*

*Old City - Jerusalem*

*Via Amman (Jordan)*

**"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology**

Printed in

JERUSALEM

# —= Ս Ի Ռ Ա Ն =

ԻԵ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1951

ՀՅ ՀՈԿՏԵՄԲԵՐ Է

ԹԻՒ 10

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ Ս. ԱԹՈՌՈՅ ՆՈՒԻՐԱԿ  
ԳԵՐ. Տ. ՍԵՐՈՎԵՔ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Մէկ ու կէս տարի է որ Ամերիկա կը զտնուէր, Ս. Աթոռոյս նուիրակ, Գեր. Տ. Սերովէ Վրդ. Մանուկեանը, հանգանակութիւններ կազմակերպելու և նուէրներ ընդունելու երուսաղէմի վանքին և անոր պարիսպներէն ներս ապաստան գտած մերազն ժողովուրդին ի նպաստ :

Գեր. Նուիրակ Հայրը, շրջած է Միացեալ նահանգներու Արեւելեան թիւմին և Գալիֆորնիոյ բոլոր հայաշատ կեղրոնները, հոգեսէր և Հայ Եկեղեցւոյ զգացումներով տողորուած սիրտերուն տանելու նախ՝ Քրիստոսի անօրինական վայրերու. օրհնութիւնները, խօսելու Հայ Երուսաղէմի սրբութիւններէն, ազգապարծան իրաւունքներէն, մազաղաթներու մէջ ծրաբուած հինաւուրց զեղեցկութիւններէն, և այն ոզիէն՝ որ այս բոլորին ի սէր և ի խնդիր ի գիշերի և ի տունչեան կը ջանայ, կը նիւթէ ու կը հսկէ, զինուորեալ Միարանութեան մը իրական երաշխիքով, որպէսզի չշիշանի ոչ մին այն կանթեզներէն՝ զորս մեր նախնեաց ջերմեռանդութիւնը վառած ու զետեղած է Տնօրինական Արքատեղեաց մեր իրաւունքներուն վերև, մեր Եկեղեցւոյ պատոյն և ազդին մխիթարութեանը համար :

Գեր. Նուիրակը սրտապնդուած այս նուիրականութեանց զգացումներէն և զանոնք պահպանելու սէրէն, Ամերիկայի մեր բախտաւոր արենակիցներուն հանգամանօրէն պարզած է Ս. Աթոռին բազմերես կարիքները, և մեր հասարակութեան անզործ և շուարած վիճակը, Պաղեստինի աղէտին հետևանքով պատճառուած :

Հոս կը մասնաւորենք մեր զոհունակութիւնը Ս. Աթոռոյ Գերապատիւ նուիրակին ժրաշխան զործունէութեան համար : Նիւթական զոհացուցիչ արդիւնաւորութեան հետ միասին ան զգացուցած է ամենուրեք իր անձին հմայքն ու տպաւորութիւնը եւս : Դրուատիքներն ու զոհունակութեան արտայայտութիւնները որոնք բերանացի և զրաւոր, մեզի եկան իր մասին, հպարտութեամբ լիցուցին զմեզ բոլորս :

Ս. Աթոռոյ մեր նուիրակին ի հաշիւ եղած այս բարոյական վարկը, անտարակոյս իր բարերար դերն է ունեցեր հանգանակութեան արդիւնքին մէջ, վասնդի առանց բարոյական ոյժի, դիւրին ձեռք չեն բերուիր այս կարդի նիւթեական յաջողութիւնները:

Արդար ըլլալու համար պէտք է խոստովանիլ թէ Ս. Աթոռոյ և մերազն ժողովութիւն տնտեսական գմնդակ կացութիւնը բարելաւելու համար, երեք տարիներէ ի վեր արտասահմանի հայութիւնը ամենուրեք կատարեց և կը շարունակէ դեռ կատարել իր եղբայրական օգնութեան պարագը, զիսաւորութեամբ Հ. Բ. Բ. Միութեան, որուն լիաբուռն և իշխանական նուիրատուութիւններն ու սրտազին փոյթը Ս. Աթոռոյ նկատմամբ, Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան ամարեզրութեան մէջ պիտի մնան միշտ ոսկի տառերով արձանազրուած: Ցարդ Ս. Աթոռոյ և Պաղեստինահայ աղէտահար մերազնէից սոյն ազգապարծան Հասաւատութեան կողմէն արուած ութսուն հազար տոլարը, նախախնամական դեր ունեցաւ: Այդ մեծակշիռ նուիրատուութեան չնորհիւ, մահիճին մէջ զալարուող հիւանդը ունեցաւ իր դեղը, մանուկը՝ իր կտթը, ուսանողը՝ իր գիրքը և կրթական մշակը իր վարձքը:

Հ. Բ. Բ. Միութեան 80 հազար տոլարի այս նուիրատուութեանը 30 հազարը, յատկացուած է Ս. Աթոռոյս ժառանգաւորաց Ընծայարանին և Ս. Թարգմանչաց Վարժարանին: Կրթական զործին ընծայուած այս նպաստը, իր բարերար դերին հետ միասին, կը կրկնապատկէ բարձրօրէն մեր համարումն ու զգացումը հանդէս ազգապարծան Միութեան և անոր իմաստուն զեկավարներուն և յանձանձիչներուն, վասնդի դաստիարակուած անհատ մը ամէն բանէ աւելի և վեր խմորն է իր ժողովութիւններ ապազային:

Բայց մեր կարիքը դիմաւորելու կերպին և անոր հասնելու լիաբուռն փոյթին մէջ, Ամերիկայի հայութիւնը, ինչպէս ամէն ատեն, այս անզամ եւս պիտի մնար անզերազանցելի: Ս. Աթոռոյս Դերապատիւ նուիրակը իր պարտականութեան յանձանձման ընթացքին, ամենուրեք, Ամերիկայի մէկ ծայրէն միւսը, դիմաւորուած է յարզանքով և սրտազին զգացումներով: Աւ ասիկա անոր համար, վասնդի զաղթաշխարհի բօվանդակ հայութեան սրտին ինչպէս մտքին մէջ, Երուսաղէմը, իբրև նուիրական մէկ ճիւղը այն ծառին՝ որ Հայատանեայց Եկեղեցին է, կը պահէ միշտ տարօրէն այն ամուր կշիռը, զոր շատ քիչ նման Հաստատութիւններ երբեկցէ ունեցած են:

Սակայն Հայ Երուսաղէմը եղած է առաւելաբար այն կազմակերպութիւնը, որուն բուն կոչումն է Մուրը Երկրին մէջ ի վազուց անտի Հայատանեայց Եկեղեցւոյ և ազգին պատկանած Մրբավայրերու պահպանութեան զործը: Այդ նպատակին ուղղուած են ամէն ջանք և մտահոգութիւն, կրօնական նուիրում, նիւթեական զոհողութիւններ և մտաւորական ու կրթական տաժանքներ, Հաստատութեան անունն ու պատիւը պահպանել և դնելու այն բարձրութեան վրայ, որ մեր երանաշնորհ նախնեաց ջանքն ու ճիզն է եղած կրօններու և ազգերու այս մրցարանին մէջ:

Իսկ իբրև ուխտավայրը քրիստոնեայ հայ սերունդներու, որոնք դարերով իրենց խունկին, արցունքին և լումային հետ բերած են նաև իրենց հոգիներուն վիշտն ու քաղցրութիւնը, կրկնապէս հարստացնելու և նուիրականացնելու հա-

մար այս հոգեոր և ազգային Ռւխտը, Երևանաղէմի Աթոռը կը զրաւէ տեղ մը, որուն կրօնական տարածքը հոգիներու վրայ, վեր կը մնայ չափերէ և բաղդատութիւններէ։ Ահա զաղտնիքը անտարակոյս այն սրտազին վերաբերմունքին, զոր շուրջ չորս տարի է արտասահմանի բովանդակ հայութիւնը ցոյց տուաւ անվերապահօրէն Երուսաղէմի Հայոց վանքին և ժողովուրդին նկատմամբ և կը չարունակէ ցոյց տալ։ Հայ ժողովուրդը ամէն տեղ աներկմիտ բացաւ իր սիրտն ու քսակը, կատարելու համար իր կրօնական ու ազգային պարտականութիւնը։

Այս տեսակէտէն առաջին գիծի կուգան, ինչպէս յիշեցինք, Ամերիկայի մեր հարազատները։ Ա. Աթոռոյ Գեր. Նուիրակը սրտազին տպաւորութիւններ ունի Ամերիկայի մեր թեմերէն և այն ազնուական անձնաւորութիւններէն, որոնց դիմած և որոնցմէ ընդունած է յանուն Ա. Աթոռոյ կարելի օժանդակութիւնը։ Ենորհիւ Գերապատիւ Նուիրակի ջանքերուն և Ամերիկայի մեր հարազատներուն, կարելի եղած է շուրջ 75 հազար տոլար հանգանակել, 50 հազար Արեւելեան թեմէն, և 25 հազար Գալիֆորնիոյ հայութենէն։ Բոլորն ալ անխտիր, Հայու վայել զգացումներով, բերած են իրենց մասնակցութիւնը։ Բացի մեր ժողովուրդի այն զանգուածէն, որ յաճախ հայ զգացումներէն և իրաւունքներէն ուժգնօրէն կը սիրէ խօսիլ, և որ սակայն մեր դժբախտութեան սկիզբէն մինչև այսօր, կազմակերպուած անտարբերութեամբ մը, խուսափեցաւ միշտ իր մասնակցութիւնը բերելէն, յաճախ խոչընդուաներ և դժուարութիւններ իսկ յարուցանելով։ Եթէ կարդ մը վայրերու մէջ այս վերջինները բերել փորձեցին իրենց խօսքի և նիւթականի աննշան մասնակցութիւնը, ատիկա պարզապէս երեւոյթները փրկելու կերպ մըն էր միայն։ Պիտի չուզէինք հոս մասնաւորել այս շատ արտում պարագան, եթէ ինքզինքնին այսկերպ բացառողները իրենց պահանջներուն մէջ չըլլային անզիջող ու յոխորտ։ Մեր ցաւը չի զար նիւթական փըշը անմասնակցութենէն, այլ այն ողիէն ու կեցուածքէն, զորս այդպիսիները ցոյց տալ փորձեցին համազային տագնապի մը նկարազիրը ունեցող մեր այս աղէտին մէջ։ Չենք խիթար ու չենք միար իրենց այս անտարբերութեանը համար, սակայն պիտի սիրէինք որ անոնք չմնային հեռու մեզմէ, իրենց զգացումներովն ու զործովը մասնաւանդ։

Եւ սակայն նոյն այդ զանգուածը իր ջերմ ուշադրութեան առարկան պիտի ընէր Վենետիկի վանահօր կողմէն ձեռնարկուած հանգանակութեան գործը, լիարուան մասնակցութեամբ։

Մարդս իրապէս մարդ է, երբ իր մէջ կը ծնի զութը, բարիին ու բարեգործութեան զգացումը։ Երբ կը թերանան մարդիկ իրենց այս զգացումին մէջ, հանդէպ իրենց եղբայրներուն և մանաւանդ արենակիցներուն, իրենց ըոլոր զգացումներն ու սկզբունքները կը նմանին ձմեռնային արեւին որ կրնայ լուսաւորել, բայց չի տաքցներ։

Պաշտպան հանդիսանալ իր նմանին և արենակիցին, երբ ան պէտք ունի մեր արդար աջակցութեանը, երբ ան արտմութեան և անզործութեան մոայը ունի իր աշքերուն դէմ, անփոխարինելի պարտականութիւններ և սփոփանքներ

են, որոնք կեանքի մութ ժամերուն՝ ոյժի աղբիւրներ կը հայթայթեն մեզի, համբերութեամբ կարենալ տանելու կեանքէն մեր բաժին ցաւը:

Չոհողութեան, տալու այս ողին՝ միշտ արթուն և կենդանի եղած է մեր գարաւոր ազգային կեանքին մէջ: Թերթեցէք մեր բոլոր եկեղեցիներու, որպացներու և ազգային հասաւատութիւններու յիշաւակարանները և պիտի համոզուիք մեր դարաւոր կեանքը արժող այս իրողութեան: Այս վայրկեանին որ ժողովուրդ մը կը դադրի զոհելէ ինքինքին և իրեններուն, կը դադրի կեանքէ:

Աղանդաւորութեան մը ողին ցուցադրող այս զանգուածէն դուրս, ամերիկեան թեմերու հայութիւնը ամենուրեք անխափի ընդառաջած է Ս. Աթոռոյ հովեռանդն նուիրակի խնդրանքին, և երկրորդ անգամ ըլլալով, սրաազին հանգերձած է անհրաժեշտ հնչիւն բարիքը ի պէտս մեր կարօտութեան:

Հանգանակութեան գործը հոգանաւորուած է Առաջնորդարանի Վարչութեան կողմէն, իսկ միւս բոլոր կեդրոններուն մէջ իրենց ամէն գնահատանքէ վեր փոյթեռանդն մասնակցութիւնը բերած են եկեղեցական վարչութիւններն ու հովիւները: Այս առիթով եղած են նաև որոշ նպատակներու համար մասնակի նուիրատութիւններ և կտակներ, որոնց պիտի անդրադառնանք առանձինն:

Յանուն Սուրբ Աթոռոյ ուխտանուէր և զինուորեալ Միաբանութեան և պաղեստինաբնակ մեր կարօտ ժողովուրդին, կը յայտնենք մեր սրաազին չնորհակալիքն ու երախտազիտութիւնը, նախ ամերիկահայութեան արժանաւոր առաջնորդ և մեր սիրելի Միաբանակից եղրօր Գերապատիւ Տ. Տիրան Եպս. Ներսոյեանին, թեմակալ հովիւններուն, եկեղեցական Վարչութիւններուն և առհասարակ բովանդակ ամերիկահայութեան մերազն հարազատաց: Երախտազիտութիւն և օրհնուութիւն, որդեկորոյս մայրերէն, զերեզմանամերձ ծերերէն, ստնդեաց մանուկներէն և առհասարակ մերկ, նօթի և թօշնելու մօտ եղող հայորդիներէն: Տէրը թող վարձահատոյց ըլլայ բոլորին՝ իրենց տուած մէկի փոխարէն հազարապատիկ վերադարձնելով անոնց:

Սրբել կաթիլ մը արցունք, տալ յոյսին պատառը անկէ ինկածին, հաստատել վստահութիւնը բոլոր ստորանկեալներու հովին մէջ, թանկազին և հոգեկան հաճոյք պատճառող իրողութիւններ են, արզասիք յաճախ հազիւ զզալի զոհողութիւններու, նիւթական մարդին վրայ:

Երախտիք և օրհնուութիւն, անզամ մը ևս, ամերիկահայ մեր հարազատներուն, որոնք զիտեն միշտ հանգերձել բարիքը ի խնդիր տառապողներուն, և որոնք այս առիթով, մեզի հետ միասին, մշտամրմունչ կ'օրհնեն իրենց բարերարները, կրկնելով աւետարանի երբեք չհինցող պատղամը. — թէ զաւաթ մը պաղ ջուրն անզամ անվարձ չի մնար այս աշխարհի մէջ: Թող օրհնուին յաւէտ այն ձեռքերը, մանաւանդ սիրտերը, որոնք ազնուամիտօրէն զիտցան բաժին առնել այլոց ցաւէն, և միսիթարութեան աղբիւրը ըլլալ իրենց եղրայր մարդերուն: Վասնզի չկայ աւելի անուշ պահ կեանքի այս մեր ապրումներուն մէջ, քան այն՝ յորում մեզի առիթը կը տրուի ուրիշի մը արցունքը սրբել: Որքան ճիշդ է այն խօսքը թէ ողորմութեան կարօտ եղողները իրաւ են այնքան՝ որքան զայն ընել կրցողները:

«Երանի ողորմածաց զի նոքա զողորմութիւն զտցեն»:

## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՐՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Տանարք լիցենզ բազմութիւնը կը ծփայ ալիք ալիք, համաձայն արարողութեան ընթացող գնացին: Բոլոր դիմերու վրայ կը շարժի յուղումին նետ յամբճիք ծանր ու մասայոյ բան մը:

Հինգ ընծայեալներու ծնկաչով կը կենանք Մթազան Հայրապետին առջեւ. մեր երկու կողմերը սրատրով ուրչանակի կը կենայ եկեղեցականներու դասը, լսելու համար մեր հաւատին եւ դաւանութեան խոստվանութիւնը, համաձայն Հայրապետի հարցումներուն:

Խորհրդաւոր է պահիք, մանաւանդ ընծայեալներուն համար. մեր երեւակայութեան առջեւեն կ'անցնին նետքինքն, իրեւ խորհրդասոյ շարժապատկերի մը մէջն, քիստնեական մատումին սրբութիւնը կերտոյ մեծ անձնութուրիւններու դիմերը, մին միւսէն աւելի լուսափայլ ու ճեղ՝ «Յաւիսեական յիշտակին արգարոց օրինութեամբ եղիցի», կ'երգեն դպիրները սրայոյզ ու խաղրածայն, իրեւ երախտապիտուրեան տուրք եւ վկայութիւն անոնց՝ որոնք զերագոյն վկանները եղան եւ կը շարունակին մաս ինչպէս քիստնեական տիեզերական հաւատին, այնպէս ալ մեր Եկեղեցւոյ:

Այսկերպ կը վերշանար արարողութեան նախապատրաստական մասը: Ցեսոյ նորեն կը կազմուեր քափօր, առաջնորդելու համար ձեռնադրութեամբ դէպի աւագ սեղան, ժողովուրդի բազմութեան մէջն հոսող ոոկի գետակի մը նման:

Նորին Ս. Օծուրիւնը բազմած է սեղանին աջակողմ դրուած արոտին վրայ, որշապատուած առընթերակայ եախսկոպսոներէն եւ սարկաւագներէն: Երեն կ'ուղղուին ընծայողներն ու ընծայեալները: Հակիրք բայց սպաւորող արարողութենք մը յետոյ, նինգ ընծայեալներու բեմին վրայէն կը դառնանք դէպի ժողովուրդը, ծնրադիր եւ ձեռամբարձ: Արարողութեան ամենէն խորհրդաւոր պահն է: Եկեղեցականաց դասը երից կ'երգէ առասուածային եւ երկնաւոր ընորի ... կոչէ ... ի խնանայութենէ յեպիսկոպոսուրիւն սրբոյ Եկեղեցւոյ ի սպասաւորութիւն», եւ դպրաց դասը վարէն՝ յանուն ժողովուրդին, երից

ձանակցելով կը պատասխանէ «արժանի հն»: Յուզումը կը լիցնէ տանարք, վառուող ջաներուն ներեւ եւ դէպի սեղանը կարկառուող տրամանոււ նայուածներուն մէջ կը պապղան արցուններ, ծաղկող պարեկի մը վերածելով Եկեղեցին լիցնող հոգեսլաց հաւատացեալներու բազմութիւնը: Յուզուած ենք նոյնական մեջ, նեռումին ներեւ նրական վայրկեանին եւ յանձնառութեան ներգործող ազգեցուրեանը:

Դարեն ի վեր, մեր Եկեղեցւոյ համբով, կը մրնջին օրիներ: Գեղեցիկ է արտայայսուրիւնը, սակայն զայն իրականացնելու կերպը յանախ աշխարհ մը դժուարութիւններու բախով: Անոնք որ կը զգան Եկեղեցին մարդուն նորոգութեան այս երկունքը, կը բանուին տագնապէ մը որ ննջչ է ու խոր եւ որուն նետ կարելի չէ հաւուիլ առանց ատուածային ընորինին: Որքա՞ն հեմարիս է մատումը քէ ով որ մեծ զործի մը կը լծուի, Աստուծիկ կոչուած պէտ է զգայ ինքոգինքը եւ անոր նովանինին ապաւինած սանձնէ պարտականութիւնն ու ծառայութիւնը իր Եկեղեցին ու ժողովուրդին:

Վերջացած է Երգը, կը դառնանք դէպի սեղան: Աղօք, ձեռնադրութիւն, յետոյ կը շարունակուի Ս. Պատարագը, կը կարդացուի գիրք եւ տիեզարան, կը կատարուի ընծայից վերաբերումը: Տակաւ կը խաղաղի լարուած հոգեփինակը Եկեղեցին լիցնող բազմութեան: Պատիրները կ'երգեն մելանու ու զգացուած: Ս. Հայրապետին ձամբ անհուն բարձունքէ մը իշնող պազգամի մը պէս կը ննչէ խորհրդաւոր անակնկալի մը սպասումով կարծես տողորուող հոգիններուն վրայ:

### ՇՆՈՐՀԱԲԱՌԵԱԼԻԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

«Ողջոյնեն առաջ կը վերակսի ձեռնադրութեան արարողութեան խորհուրդը. ընծայեալներու ծնրադիր կը բոլորուինք զարձեալ ձեռնադրոյ Հայրապետին առջեւը, որ յուզումին կարկրող ձայնով կը կարդայ ընորհաբաշխութեան մեծ աղօքը, որով Ս. Հոգւոյն կենազործող ընորի կը հայցուի նոր ընծայից վրայ: Կը բառուի վարագոյրը

Եւ ձեռնադրուողներս զգացաւորուած եւ պիտկապոսական հանդերձանքով, կը շարուին նորէն սեղանին առջեւ: Փամա է օծումին, իբր նշանակ Ս. Հոգևով դրումուելուն: Դայիրները կ'երգեն «Կենդանարար Աստուած» շարականը, սեղան կը բերուի Ս. Միւռնի աղաւնին: Հայրապետը ընդունելով զայն, կ'երգ «Առափելոյ աղաւնոյ», Հոգևոյն Մրգոյ իշման շարականը, նեղով սուրբ իւլյո ոսկեայ ընդունարանի մը մեջ: «Ամէն ալելուեա» կը ձայնեն դպիրները, Ս. Հայրապետը կ'ամփոփուի ու կը վերանայ կարծես: Դունչ ու ականջ դարձած է ամէն ո՛ք. արարողութիւնը իր ամենէն յուզիչ բարձրակետին կը մօսենայ, քար լուրեան եւ անշարժութեան մէջէն կը նիշէ յուզումէն րրուացող ձայնը ձեռնադրող Հայրապետին, որ կարգով կ'օճէ եպիսկոպոսուներուն նական ու աջ ձեռքին բոյր մատը: Ապա իւրաքանչիւրիս կը յանձիէ, սրչութեան ուրոյն օրինուրիւններով, զաւազան, մատանին եւ ալեսարանը, մինչ դպիրները վարեն կ'երգէին «Մր ի վերայ բխեալ զաւազանի» շարականը: Այսպէս, եպիսկոպոսական բազով եւ եմիփորնով զարդարուած, իշխանութեան մատանին ու զաւազանը զգեցած, նորապակ հինգ եպիսկոպոսներս սեղանին վրայ շարուած կը կենանի: Վերջացած է ձեռնադրութեան խորհութիւնը, սարկաւագը կը ձայնէ «Աղջոյն Տուք միմիանց»ը. Մրգան Հայրապետը նախ կը համբուրէ իր ձեռնասուններուն օծեալ նականները, իրեն կը նեսեւին բոլոր նոզեւուրականները, որոնք իրենց կարգին մօղովուրդին կը փոխանցեն ձեռնադրուած եպիսկոպոսներուն ողջոյնին անդրանիկ օրինենքը: Պատարագի վերջաւորութեան կը հալորդուինին, յեսոյ կը շարուէինք բեմին առջեւ, ընդունելու համար հաւատացեալ մօղովուրդին աշխամբոյրը:

Աւելի բան սրաւուց էր այն կարօսագին վերքերմունքը զոր Ս. Էջմիածնայ Մայր Տաճարը լցնող հաւատացեալ մօղովուրդը ցոյց տուալ այդ օրը, աշահամբոյրի միջոցին: Կատաղուէն, պիտի բուր մեր մեծ բանասեղծը, անոնք կը մօսենային մեզի համբուրելու համար մեր աշը, ու բոլորի նայուածին մէջ կը բարմանար բռամած ծաղիկը իրենց հաւատին, եթի կը նայէին մեզի, եթի կը կախէին իրենց նայուածին ու նոզին մեր հասակներէն:

Հինէն ի վեր բոլոր մօղովուրդներն ու կրօնները երգի ու խորհուրդի նամբային բալան են Աստուծոյ: Հայ պատարագն ու ձեռնադրութեան խորհուրդը այդ օր անզամ մը եւս իրարու կը կապէին բոլոր հակամարտ զգացումները: Հայ մօղովուրդի դարաւոր գիտուրինը դիմաւորող եւ իր լուծումին տանող մեր պապերու ձայնին, նոզիին ու խորհուրդին այս ձաւալումը, մեզի կը բանայ մեր հարազատութեան գերազոյն բակրգրունքը: Հայ Պատարագը հայ նոզին տիեզերի սրտին կապով խորհրդաւոր ժապաւենն է, որուն գործաւորներն եղան մեր պապերը եւ որուն ոյժը դարերով չէ պակսած մեր նոզիներէն, հակառակ դժբախտութեան բոլոր ձմեռներուն: Մեր նոզիի եւ խղճմաննի մուր բարյաններէն նոսող այդ կանչին մէջ ամէն նայ կը գլուխ մաս մը իր նոզիին ու կը բացնէ նայ դարերէն ու երկինքը, նման ախորեալին որ կը սարաւայ երբ կը լսէ իր նեռաւոր հայեննիքին մէկ երգը:

Ոչ մէկ մօղովուրդի մէջ պատարագը այն ատինան յուզիչ է, որքան մօտապէս պատարագուող ցեղի մը խորաններուն վրայ: Եւ ոչ մէկ մօղովուրդ այնքան սրտագին խանդաղանենավ կը նայի իր մօղովուրդի եւ նկեղեցւոյ նուիրեալներուն բան նայը: Վասնզի ամէն հասակ որ կը խորտակի ինքնինքը իր մօղովուրդի ծառայութեան ու փրկութեան համբուր վրայ, ներս մը եւ սուրբ մըն է միանցամայն:

Անա թէ ինչո՞ւ համար, Էջմիածնայ Տաճարի նուիրական կամարներուն ներեխ, իր հարալատ անցեալին նես անզամ մը եւս կապուած ըլլալու զգացումը, նայ պատարագին ու խորհուրդին միջոցաւ, սրբազն ու նին զինով մը պիտի խանդավառէր նայ հաւատացեալներու այդ բազմութիւնը, որոնք եկած էին հաղորդուելու մեր պատմութեան ու կեանիքի դարաւոր խորհուրդին:

Հակառակ մեր նոզեկան ու մանաւանդ մարմնաւոր յաղնութեան, սիրով ու հանոյիով կը գիմաւորէինք ժամեր տեսող աշահամբոյրի այս արարունենքը: Ներքին, անբացատելի զգացում մը իրարու կը զօդէր կարծես նկեղեցւոյ կանչին առաջնորդուող հօսն ու հովինները: Այդ կանչը ձայնն է մեր անցեալին, հնարական զեղումն է նայ նոզիին, պուտ պուտ բարուած խորութիւնը մեր դարաւոր վիշտին ու երազին, մեր գրականութեան ու

առուեստին: Այդ ձայնին թելով, իրարու եկած, իրարու կապուած կը մասիմին մեր հոգիներուն ուղևաղաւարը եղող էջմիածնի կարողիկեն կամարներուն ներեւէ:

Ժամար չորսն եր արդէն, եւ տակաւին կը օւրունակուեր աշանամբոյրի սարրօրէն սրագրաւ արարողութիւնը: Զարմանալի ազգ, սահմանի ժողովուրդ կը մերճշծն ըրբ-ներու ակամայ: Մեր բովանդակ պատմութեան խորհուրդին պատկերն է որ կը բեմադրուի նորէն, Նայ ժողովուրդի եւ իր նկեղցիի այս հաղորդութեանը թնդնդէն: Դարեւն ու հանգամանենքերը չեն կրնաւ այնեան դիւրին կերպով աղօսել ու չխացնել ժողովուրդներու հոգիին մեջ իր ամենն օրաւոր բնադրն ու հրայրքը, դարեւնվ շրդեղուած քրիստոնեական զգացումին եւ մածումին արիւնովը:

Առանց հոգեկան այդ կառոյցին, կը մածեմ, հայր գուցէ կարենայ օւրունակել իր գոյուրիւնը, սակայն օսա բան կորսնուցած պիտի ըլլայ իր եռւրենէն, իր ինընութենէն: Նաև բան իր ապրումներէն, իր հաստատ ու տոլուն հաւատէն ու կամեցողութիւններէն, մեկ կողմէն հակասագրական կործանումներու դէմ, որոնք կը օւրունակեն գեռ իր բաժինը ըլլալ, միւս կողմէն իր ժեւական յաղբանակներէն, որոնք իր զոյուրիւնն են երաշխաւորած պատմութեան դաշտեւն ի վեր:

Վերջացած է աշանամբոյրի արարողութիւնը, սակայն ժողովուրդի օսուար մասը դեռ կը յամենայ Տաճարէն ներու ու զիխաւոր մուտքերուն առջեւ, ուղղած իրենց հոգին ու նայուածները մեզի: Այդ անհութօրէն խօսուն աշխերուն ի տես, որոնց մեջ մեր դարեւու խորհուրդը կը հայելիանայ, հոգիին մեջ թել կը նետէ մեծ եւրողին խօսքը, ուս ննջին, այլ սիրս իմ արքուն կայ:

Նկեղեցւոյ օրջապատին մեկ հեռաւուր անկիւնն կը լուսի առուղական հինաւուրց տաղը, «էջմիածնի ոսկի սիւնը...»: Քաղցր ալիք մը կը խուռիք, հոգիս, ու կը զգամ քէ ինքոյնին նետ չեմ նորէն, անցեալը այնեան ուժգնուն կը բացուի իմ մեջ, որ իզուր կը փորձեմ երեւակայութենէս վանելու այն կարնուակ ու ոսկի մեռւը, որուն սրբազն ուլւիայէն կը տրուի ինձի տեսնել բաներ՝ որոնք աւելի բան սիրելի էին...: Ու ինձի կը բռւի քէ աշխարհ մը կը բալէ ինձի նետ այդ մոււշին մեջէն՝ առանց մարմինի: (Ծար.՝ 2)

## ԿՐՈՆԱԿԱՆ

### ԱՆՄԱՅՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ

Բայց, կ'ըսէ մէկը, որ այլես չի կը սարգապել իր անհամբերութիւնը Աստուծոյ մասին այդպիսի ուրախ գաղափարի մը հետ, որսի կ'ուզէք թէ մարդկօրէն լաւագոյնին սահմաններուն մէջ մեկնելով զԱստուծած կրնա՞ք երկակայել, հասկնալ բացարձակ Աստուծածութիւնը, ամենազէտ Աստուծածը, ամենուրիք, ամենազէտ Աստուծածը, իմաստասիրական պատճառը աշխարհի, էտկարանական էութիւնը տիեզերքիս: Ուրան կը պատասխանէ քրիստոնեան նոյնափառ անհամբերը. «Ել կարծէ՞ք թէ ես զիշերը արե կ'որսամ թիթեռնիկի թակարդով, որ աշխատիմ բանտարկել Ամենաբարձրեալը մարդկային խորհրդանիշի մը մէջ: Ես ո՞վ եմ որ խօսիմ բացարձակ Աստուծածութիւնն մասին կամ աշխատիմ ըմբռնել Անհունը հունաւոր մաքով: Իմ հաւատքս սա է միայն որ բովանդակ յաւիտենականութեան ընթացքին, Աստուծոյ մասին բոլոր յատկութիւններով միասին, իր զիտացած լաւագոյնով սկսող մարդ մը երբեք կանգ պիտի չառնէ, բոլորտիքը գառնայ, ետ դառնայ և գարձեալ սկսի դէպի Աստուծած, ճամբու մը վրայ որ այդ լաւագոյնէն նոււազ լաւագոյն է: Անիկա երբեք պիտի չընտարէ ճանապարհ մը որ անձնականէն աւելի ցած ըլլայ, կամ որ ժխտէ սրբութիւնն ու ոէրը: Ճամբան ո՞րչափ հեռաւորութիւնն կ'առաջնորդէ իմ ակնարկէս անդին, չեմ կրնար գուշակել, բայց ասիկա միհնոյն ճամբան է և ոչ ուրիշ ճամբայ»: Աըր Օլիվը լօճ առւած է Աստուծոյ գաղափարին մօտենալու մասին քրիստոնէին մէթոսին մէկ կատարեալ համառութիւնը: «Պիտի չհաւատամ թէ մարգուն տրուած է ունենալ աւելի ազնիւ կամ աւելի բարձր խորհուրդներ քան իրերու իրական ճշմարտութիւննու: Երբ, հետեւարար, քրիստոնէին երեսին կը նետուի հին կշտամբանքը, առիւծները եթէ կարենային նկարագրել զԱստուծած, պիտի պատկերացնէին դայն տուիւծի մը պէս», պատասխանը խկոյն պատրաստ է:

կաւ, առիւծներուն համար։ Որովհետեւ եթէ անոնք օժտուած ըլլային բաւական զօրաւոր հաւատքով մը իրենց ունեցած լաւագոյնը առնելու չափ արժանաւոր եւ բարձր բան մը ընելու և Աստուծոյ մասին խնամազ մտածելու պէս անոնք իրենց կեանքի իմաստափութեան մէջ նոյնչափ շամ քրիստոնեայի դիրքին մէջ պիտի ըլլային։ Անշուշտ աւելի ազնիւ և աւելի ճիշտ պիտի ըլլար առիւծ մը որ կը մեկնէ զԱստուած իր երեակայել կրցածին չափ լաւագոյն առիւծի սահմաններուն մէջ քան ըլլալ մարդ մը որ կը մեկնէ զԱստուած տիղմի սահմաններուն մէջ։

Բայց եթէ Աստուած բարի է ասոր նման ուեէ ձեռվ, ուրեմն մահը չվերջացներ ամէն բան։ Ոչ միայն ընդհանրապէս բոլորովին անհաշտ է անբանաւոր աշխարհ մը արդար և բարերար Աստուծոյ մը հետ, այլ մասնաւորաբար, բարի կամքի տէր Աստուած մը պէտք է հոգայ իր ստեղծագործութեան համար։ Ուրեմն, ամրող տիեզերքի մէջ ի՞նչ կրնայ ըլլալ աստուածային խնամքին առարկան։ Աստուած պարապ բան է իր արեւուն և աստղերուն մասին։ Զանոնք իր մատին չուրջ կը դարձնէ՝ տղու մը պէս որ հապարտ է անոնց պլազացող թաւալումներով, մինչև որ զանոնք կարգափոխելով և բնաւ հոգ չընելով որ կարգափոխութիւնը պատահականորէն կը ջնջէ երկրի վրայ էակներու անցաւոր ցեղը, զանոնք տարբեր եղանակով կը դարձնէ։ Աստուծոյ մասին այդպիսի ըմբռնում մը անկարելի է։ Եթէ Աստուած գոյութիւն ունի ուեէ ձեռվ, պէտք է խնամք տանի իր ստեղծագործութեան պասկին, անհատականութեան։ Զարլըս Տարգին մեզի կ'ըսէ թէ երբեմն երբեմն կ'ունենար բարեկամ Աստուծոյ մը ջերմ զգացումը, բայց թէ ուրիշ ատեններ այդ զգացումը կը ցնդէր։ Սակայն և այնպէս նոյնիսկ արդչափ խուսափուկ հաւատքով մը թէ ան խնամք կը տանէր իր արարածներուն համար, գրեց, «Աններելի խորհուրդ մըն է թէ մարդ և բոլոր միւս զգայաւոր էակները զատապարտուած են կատարեալ ոչնչացման, այդչափ երկար շարունակուող դանդաղ յառաջդիմութենէն վերջ»։ Մէկու մը որ խորապէս համոզուած է թէ Տարգինի պատահական և առօրեայ զգացումը բարեկամ

Աստուծոյ մը մասին կրնայ ըլլալ մարդու մը բանաւոր և հաստատ հաւատքը, աշխարհի մասին այդպիսի ըմբռնում մը ոչ միայն աններելի է, անկարելի է։ Խօսիլ հայրութեանը վրայ Աստուծոյ մը որ կը ծնի զաւակներ, միայն ոչնչացնելու համար զանոնք, աննեթեթէ է։ Աստուծոյ բարութիւնը պարզապէս խնդրոյ առարկայ կ'ըլլայ երբ մարդ կը վիճաբանի անմահութեան վրայ, որովհետեւ եթէ մահը կը վերջացնէ ամէն ինչ, Արարիչը կը շինէ մարդիկ ծովեզերքը շինուած աւազէ տուներու նման, մանանեխի չափ հոգ չընելով թէ չարազէտ աղիքները զանոնք բոլորը պիտի փնացնեն բացարձակապէս։ Եթէ մահը վերջ կուտայ ամէն բանի, մարդկութեան պայքարն ու տեխնչանքը անոր համար չունին աւելի նշանակութիւն քան այն մշուշը որ առաւօտուն կը հանգչի Ալպեան լեռներուն վրայ իսկ գիշերը կը ցնդի։ Եթէ մահը վերջ կը գնէ ամէն բանի, չկայ Աստուած որուն բարութեան մասին, մարդուն երեակայելի ուեէ իմաստով, կաշընայ քարոզուիլ։

Թէ անմահութեան չուրջ հաւատքը որչափ անքակտելիորէն հիւսուած է խնամատար Աստուծութիւնեան մը չուրջ զոյութիւն ունեցող հաւատքին հետ, պարզ է, երբ մարդ նկատողութեան կ'առնէ յարգելի առարկութիւնը հաւատքի մը դէմ թէ Աստուած բարի է, որ միշտ գժուարացուցած է Քրիստոնեայ լաւատեսութեան ընդունելութիւնը։ Մարդկային կեանքի ներկայ չարիքները, անոր թշուառութիւնները, հիւսութիւններն ու մեղքերը, կիպօնի երկրաշարժը որ պատճառ եղաւ որ կէօթէ իր վեց տարեկան հասակին մէջ անգամ կասկածի տիեզերքի արդարութեան վրայ, ու Ման-Ֆրանչիսկոյի հրդեհը, որ աւելի անաստուածներ շինեց քան քարոզիչներ, պիտի փոխուին բազում տարիներու մէջ — ասոնք են Աստուծոյ պատուին և բարերարութեան դէմ տիպար և հսկայ փաստերը։ Այս առարկութեան դէմ միայն մէկ պատասխան կարելի եղած է միշտ։ Անոնք որոնք հակառակ մեր ներկայ կեանքին անարդարութեանը և չարիքին տակաւին կը հաւատան թէ աւելի պատճառ չկայ մարդկային զոյութիւնը մեկնելու չար կերպով անոր տառապանքներուն սահմաններուն

մէջ քան մեկնել զայն նպաստաւոր կերպով անոր հոգեոր աճման ապչեցուցիչ պատմութեան սահմաններուն մէջ, և թէ երբ անկարելի է մարդուն մէջ բարութիւն ճանշնալ եթէ աշխարհի սրտին մէջ բարութիւն չկայ, բացարձակապէս կարելի է որ զնացքի մը զիսպուածական չարիքները, առաջնորդելով գէկի արժանաւոր վախճան մը, կարենան բացատրուիլ երբ զնացքը (բրօսէս) կատարեալ ըլլայ: Աստուած բարի է խօսքը իր բովանդակ ուժը պահելու համար միշտ կախում ունեցած է ապագայի վճռին զիմելէ: Ինչպէս կլատըթն, պարտըւած՝ խորհրդարանին մէջ, հաւատաւոր մարդը դարձաւ անվախ նայելու իր թթշնամիներու երեսին, կրելով բանկոնին վրայ մարտահրաւէրի լամբակ մը, և ըսելով, սժամանակին կը զիմեմո:

Եթէ, հետեաբար, ամէն արժանաւոր վախճան մարդկային կեանքի կը հերքուի, եթէ մարդիկ, տեսնելով իրենց ներկայ անբացարելի տառապանքները, համոզուած են թէ յառաջ եկած ապագան երբեք չպիտի ցուցնէ պատճառը այն զնացքին որ հոս եղաւ խորհրդաւոր և գմնդակ. ինչպէս անօթ մը կրնար յետահայեաց ակնարկով հասկնալ բրուտին մատներուն վայելուչ և կորովի հարուածները և հնոցին ճնշող տաքութիւնը, այն ատեն կը վերնայ այն հիմը որուն վրայ մարդ կրնայ զնել իր հաւատքը բարեկամ տիեզերքի մը մէջ:


Որոշ է որ տիեզերքը բարեկամական չէ, եթէ այդչափ նեղութեամբ կանգնած է մարդուն բարոյական կեանքը, զայն խաւաքարտէ շինուած տունի մը նման վլցնելու համար միայն:

Հետեաբար երբ մարդ մը կրնայ հաւատալ անմահութեան առանց հաւատալու Աստուծոյ բարութեանը, ան չի կրնար բանուորապէս հաւատալ Աստուծոյ բարութեանը առանց հաւատալու անմահութեան: Արդարեւ, պուտտայական կիրքը խուսափելու համար շարունակուող զոյութինէ մը, տպաւորիչ վկայութիւն կուտայ թէ տուանց բարերար Աստուծութեան մը, յաւիտենական կեանքը, հաւատալի ըլլալով հանգերձ, դրականորէն անբազալի է: Անզնիւ, ութպատիկ ճամբան Պուտտայի, որով մարդ պիտի հասնի Նիրվանային (Պուտտայական երանութիւն, այսինքն չի-

ջում անհատականութեան և ծծում Գերազոյն Ոզիին մէջ, Բառարան Օբյեկտ): և զառնայ սիրը բոց մը որ մարած է, քարոզուած է մարդոց առաքելական խանդավառութեամբ մը որ կրնայ իր հաւատարը գտնել, ունէ ձեռով, միայն Քրիստոնէութեան մէջ, ոչ թէ որովհետեւ Պուտտայականները չեն հաւատար անմահութեան, այլ որովհետեւ կը հաւատառ անոր, և որովհետեւ, ըմբռնելով Աստուծուած ոչ թէ իրրե բարերար, այլ իրրե անգիտակից, անբարոյական էակ, զուրկ նկարագիրէ և նպատակէ, անմահութիւնը անոնց այնչափ անբազալի է որ անկէ խուսափիլը անոնց զերազոյն փառասիրութիւնն է: Շարունակական գոյութեան անիւը անոնց սարսափն է: Անոնք իրրե աւետարան մը կը հոչակին թէ հոս կիրքէ զուրկ զերեզմանի մը վերածուիլը — որուն մէջ բոլոր փափաքները կը մեռնին — ճամբան է անգիտակից էակին մէջ վերընկղմելու որ մեծ փրկութիւնն է ցեղին, խանգագին փափաքուած խուսափումը ապրելու անբաժեշտութենէն: ՉՈւրիմն, կ'ըսէ Պուտտա, թող մարդ բան մը չսիրէ: Սիրեցեալին կորուսոր չարիք է: Անոնք որ ոչինչ կը սիրեն և ոչ ոք կ'ատեն չզիթաներ չունինու: Շարունակական կեանքը ափեկերքի մը մէջ որ բարեկամական չէ, պատուհաս մըն է սարսափելի: Երբ, սակայն, մարդ զբականօրէն կը հաւատայ բարի կամքի և նըպատակի տէր Աստուծոյ մը, անոր համար յաւիտենական կեանքը միայն անխուսափելի չէ: բաղձալի է: Անմահութեան հանգէտ Պուտտայի զիրքին և նոր կտակարանի զիրքին միջն տարբերութիւնը այն չէ որ մինչ կը հաւատայ յետ մահու զոյութեան, մինչ միւսը վասահ չէ կամ չի հաւատար, երկուքն ալ հաւատարապէս զրականօրէն համոզուած են հոգիին շարունակութեանը:

(Պարունակիղի)

X



## ԹԵՂ ՄՈՌԱՑԱՅՅ ԶՔԵԶ ...

Քեզ ի՞նչպէս մոռնալ,  
Երկիր իմ անուս,  
Երզի մը պէս նին ոււրերուս քառած.  
Քեզ ի՞նչպէս մոռնալ,  
Երազ ոսկեման,  
Ո.նօօժիս լոււած կոյսի մը նման:

Քեզ ի՞նչպէս մոռնալ,  
Կարօս արնահամ, բայց ողկոյզ կախարդ,  
Ծաղիկներդ ամեն կարփիլ են ինկած  
Երակներէն մեր:  
Երկիրն իմ որուն մեռելներն անգամ  
Գեռ չեն խաղաղած,  
Կեանիք լոյսն իրենց միւս անիծելէն:

Քեզ ի՞նչպէս մոռնալ,  
Կրակէ մանեակ,  
Միրտերն օղակող բիւր սերունդներու:  
Լեռներդ մէկ մէկ բողոք սրբազն,  
Նետուած դէպի վեր,  
Եւ անոնց զլյուսն՝  
Մ.րցունքն է սառած մեր ասուածներուն:

Երկիրն այն որուն մշակներն անբախս,  
Խորն ընդերֆներուն անդասաններու,  
Նետեցին սերմերն հացին ու կեանիքն,  
Յօղելով զանոնի,  
Քիրտերով արդար, ուղիւրով արեան:

Քեզ ի՞նչպէս մոռնալ,  
Երկիր իմ պայծառ,  
Ուր մայրեր չքնաղ,  
Օրօրցներուն վերեւն կամարուած,  
Լոկ մահուան համար  
Մեծցուցին երազն իրենց ցողաքուրմ:

Քեզ ի՞նչպէս մոռնալ,  
Ճեղքուած մազաղար,  
Սլաքներուն տակ պատմութեան դաժան :  
Լին արիւններու , ամպերու հրդեհ ,  
Սնդունդի եղրին դեռ մինչեւ երէկ ,  
Սնդուլ գողացող զերք բռչունի բոյն :

\* \* \*

Դիւրին է մոռնալ ,  
Գուցէ աշխարհն այն ,  
Ուր պարարտարօս , կ'անին կը մեծնան  
Բարիբներ հազար .  
Ուր մարդն անաշխատ կրնայ հանապազ  
Մեղրել հացն իրեն :  
Ուր երակներէն ուզող արեան հետ ,  
Խորն անօրներուն կը փայլակէ յար  
Գիճին ոսկեփայլ .  
Ուր օրերն երգով պարով կը զընգան ,  
Ուրելով սիրոյ բազմաբել նարօս :

Դիւրին է մոռնալ ,  
Երկիրն երջանիկ ու խաղաղաւաս ,  
Որ լուսնակին դէմ հիւսեց երազն իր  
Եւ ապրեցուց զայն ոււրթին ջուրերու ,  
Դաւսերուն մարմանդ :

Դժուար է սակայն  
Մոռնալ երկիրն այն ,  
Որուն հետ խաղցդ ես բաժնել չարաչար ,  
Եւ պաւաննելու համար զինք յանախ ,  
Ճանկերէն օսար ,  
Վերեւ ես առեր իր վերֆի փոխան ,  
Եւ ականներուն մէջն իր սրբազան  
Սէրերդ ես քաղեր դոն շարան շարան :

Դժուար վերջապէս  
Մոռնալ երկիրն այն ,  
Երազը որուն , կարմիր նունումար ,

Ու նրազ կախարդ,  
Հազար մահերու դէմի արշալոյսուող.  
Ու պատրոյզն որուն,  
Հիւսուած միսերէն բիւր սերունդներուն,  
Խոյի փոխարէն դարեր դարերով  
Խմեց միւս արիւն :

\* \* \*

Քեզ ի՞նչպէս մոռնալ,  
Երկիրն իմ նախնեաց,  
Ու տառապանթէն ու մահէն հազար,  
Զերք նոր յարուցեալ,  
Կեցած ես ահա օրերուն դէմ նոր,  
Խորն աչըներուդ երազն հինաւուց  
Ցեղին մեր անմեռ,  
Խոկ ըրբունիներուդ՝  
Կեանի, յաղբութեան,  
Երգն հրահոսան ու յաւերժափս :

Ու պատկերին դէմ այս նրաւազան,  
Ծնած երազէն մեր բոցակարան,  
Կը դողայ նոզիս,  
Նման հիւանդին  
Եր մեծ վէրթերէն դեռ չապահինած :  
Ու ըրբունիներուս կը բառի նորէն  
Մաղրանին հինաւուց :  
— Օրերդ աննուազ ու անւամանդաղ,  
Երկիր իմ անուս,  
Հողերէդ ոսկի, հոսին հետեարին  
Մեղք՝ կար ու զինին :  
Ու չիյնայ վրադ ոստիներէդ բիւր  
Այլեւս ոչ մէկ շանք :  
Բացուին դարբասներդ,  
Զոյգ բազուկներու նըման մայրական.  
Հեռու եւ մօսիկ զաւկըներուն բու :

Ե Վ. Ի Վ. Ա Ր Դ

## ՎԵՏԱԿՆԵՐ

Զօն


Մեր ցեղի ազնուազոյն զաւակներէն  
ՏՈՔԴ. ԱՐԱՄ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻՆ

Եղեր է միշտ, ինչ կայ հիմա,  
Պիտի մընայ յաւիտեան.  
Ինչ ճամբով ալ որ ան գընայ  
Ս.նսկիզբ ու անլախնան,  
Ցաւով, նիզով պիտ բարձրանայ  
Եւ մօտենայ Մրութեան :

Երազն անդարձ մեկնեցաւ,  
Միայն կարօսը մընաց,  
Վեցին անգամ ժըպտեցաւ,  
Գեղեցկացած, բաղրացած,  
Միւրըս ցաւէն ծաղկեցաւ,  
Բոյրն հեռուները գրնաց :

Իմ հեռաւոր կը սպասցինս զիս նորէն,  
Վերադառնաս պիտի անըուշ օր մը դուն,  
Փրուս ըուրջըս այլեւս անանց խընդութիւն,  
Բըլուրներն այս պիտի ցնծան ու պարեն.  
Մինչեւ յայնժամ երազներուս մէջ եկուր,  
Չըլլայ քողուս սրտիս մէջ տեղըդ բափուր:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



## ԲԱՌԱՄԱՐԾՎԵՆ

«ԱԼԻԻ ԴԱՇՆԱԳԻՐ» Յ

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱՂՑԻ

«ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ» ՄԷԶ

Ա.

Գրիգոր Դարանաղցիի իր Փամանակարութեանի պատման մէջ (հրատ. Մեսորոպ Վ., Նշանականի, Երուսաղէմ 1915) քանիցոյ յիշած է ալի մանուկը, յալի մանուկը, ալի զիր եւ ալի անձնամա անուն վաւերագիր մը։ Հըրատարակիչը այս առութեանց մէջ ալի, յալի բառերը ածական համարած է և թարգմանած՝ «բարձրագոյն»։ Այսպէս, էջ 621, ալի մանուկը և յալի մանուկը թարգմանած են «բարձրագոյն հրովարտակ»։ Ալի անձնամա չէ թարգմանած, այլ միայն անձնամա «պայմանագիր»։ (մինչ այս բառին ճիշդ համագորն է սղանագիր)։

Դարանաղցիի ձեռագրին մէջ զիմանակիր տառեր չեն գործածուած։ Բայ ընկալեալ սովորութեան, հրատարակիչը զիմանակիր տպագրած է բոլոր այն բառերը որ յատուկ անուն են կամ զոր յատուկ անուն կարծած է<sup>(1)</sup>։ Այսպէս, խոյամութեան մարգարեին՝ Մուհամմատի զարմիկին և փեսային՝ Ալիի անունը զիմանակիր տպուած է էջ 157 («զըբեթէ զնոյն ինքն զլլիին ետեսո», էջ 219) («Հազրաթ Յալին») և էջ 580 («զլլին», ինչ որ ցոյց կուտայ թէ այլէ մանչ չուրց են։ առութեանց, ինչպէս նաև, էջ 155, առհանաման ի ձեռին ունի, որ ալի և յալի զիմանակիր չեն տպուած, այս բառերը յատուկ անուն չեն համարուած, այլ պրածր, բարձրագոյն» ածականին թարգմանութիւնը։

Հետագայ տողերուն նպատակն է փառաել թէ Դարանաղցիի Փամանակարութեան

մէջ «յալէ» և «ալէ» բառերը Ալի անձնանունին հոլովուած ձեւերն են և թէ «ալի մանուկը, յալի մանուկը, ալի զիր, ալի անձնամա բառախուումբերուն մէջ ալի և յալի կը նշանակեն «Ալիի»։

Նախ յառաջ բերենք այն տեղերը որ Դարանաղցի յիշած է այդ «հրովարտակ»ը, «զանագիր»ը կամ «զիր»ը, լուսաբանութեան համար անոնց կցելով հակիրճ ծանօթութիւններ։ Հետագայ բոլոր յառաջբերութերուն մէջ ալի և յալի բառերը անձնանուն զիմանակիր կը զրենք, մինչ ժամանակաբրութեան մէջ միշտ, բաց ի երեք տեղէ (էջ 157, 219 և 540) պարզ զիրով տպագրուած են։

1.

Ո. — էջ 133—134.

1607էն ետք, երբ Պոլսոյ հայ համայնքին զեքիլները<sup>(2)</sup>, Գրիգոր Կեսարացի պատրիարքին զրումով, Պոլսոյ եկեղեցիներէն կը զանեն գաւառացի պանդուխտ քահանաները և պանդուխտ ժողովուրդը, Գրիգոր Դարանաղցի, երկու եկեղեցականներու ընկերակցութեամբ, կը ներկայանայ Սուլթան Մուրատ Դ.ի նախարարներուն և կը բողոքէ վեքիլներուն վարմունքին զէմ։ Այս զիմումին ատեն, գարանաղցի ի ձեռին ունի Ալիի զաշնագիրը։

աԵւ Յալի մեծ մանուկը<sup>(3)</sup>, որ իւրեանք<sup>(4)</sup> ահտմանա<sup>(5)</sup> ասեն, ի ձեռաներունելով և գրեալ էաք ի մէջ արզուհալիին<sup>(6)</sup> զրոպիսութիւն նորա, և յորժամ որ ընթերցան զարգուհալն, խնդրեցին ըզմանչուրն, և հանեալ տուաք ի նոսա, և տոեալ զիրծանեցին և յոյժ սիրով ընդունեցին և համբուրեցին ամեննեքեան զագիրնին<sup>(7)</sup> և ետուն առ մեզ։

Բ. — էջ 151.

1609ին Դարանաղցի կը վերագառնայ

(1) Հնչպէս «ձեր Քապինարածին» (էջ 129), որ ուղղելի է «ձեր քապինարածին», այսինքն «ձեր ամուսնալուածածին»։ (Քապինը, իսլամական օրէնքով, արձակուած կամ այլիացիալ կնոջ զնարելի զումարն է)։ Այս բառը ուղիղ տպուած է էջ 523 «տալով զվարձա, զոր քապին ասեն»։

(2) ՀՓախանարդու։ Այստեղ՝ «Հայ համայնքին պաշտօնական ներկայացուցիչները»։

(3) Բառական իմաստով «տարածուած», հետեւարար բացց։ հականի մակրումի «կնքուած»։ Աբբայական պաշտօնագիր մը որով վաւերական հաստատութիւն կը տրափի իշխանութեան մը կամ պաշտօնի մը և կամ իրաւունքի մը։

(4) Թուրքերը։

(5) «Հաշնագիր», ուխտ, ուխտագիր։

(6) «Ենքաղիր»։

(7) «Վեզիրները»։

իր ծննդավայրը՝ Քեմախ, իր հայրենակիցներուն հետ, միասին տանելով սուլթանին հրամանագիրները և զԱլէ մանշուրն», որոր տեղւոյն զաքին կը ներկայացնէ արձանագրուելու համար:

«Ապա գնացաք, կ'ըսէ, առ դատաւոր քաղաքին և զամրերն<sup>(8)</sup> դայտ<sup>(9)</sup> տուաք տանել և ծանուցանել ամենեցուն զհրովարտակաց հրամանն թագաւորին և զԱլէ մանտուրն, որ մեր հաւատոց և օրինացն ոք հակառակ ոչ լիցի, և աշխարհի չինութեանն և վանաց և եկեղեցեաց զերստին նորոգութեանցն, և զԱլէ զիրն ալ զեր ի զերոյ ընկալաւ քան զհրամանն թագաւորին»:

Դ. — էջ 153—155.

Երբ 1610ին, Դարանազի Տիգրիկի մէջ Հայերը տանջանքի ենթարկած ըլլալու ամբաստանութեամբ դատարան կը հըրաւիրուի, ինք կամ իր փոխանորդները միասին կը տանին «յամրերն և զահնաման» (էջ 153), և ամբաստանութիւնը հերքելէ ետք ահանեցաք, կը զրէ, յամրերն և ահնաման և դրաք առաջի դատաւորին. և նա ընթերցաւ զյամրն ի լուր ամենեցուն և նա՛ շատ հաճոյ թուաց ոչ յամրին հըրամանն, և յորժամ զԱլէ զիրն առին, ոնց երաց զատին, սոսկաց ի տեսլեան զարմանակերպ գրոյն, որ երեք ազգ լեզուաւ էր զրեալ արձանագրով, որ իւրեանք քովի տան, և յարապ գրով զուտ կարմիր և թուրք գրովք, և ամենեքեան ի տեսն սոսկացին. և ել ի զերայ ոտից և ընթերցաւ ի լուր ամենեցուն և զարմացան մեծաւ զարմանալեօք եւ հաւանեցաւ զրոյն եւ բանիցն ահնամին և յամրերացն և քաղցրացան յոյժ ամենայն ուլամային<sup>(10)</sup> և մեզ իրաւացուցեն» (էջ 154—155):

Դ. — էջ 155—157.

Միշտ 1610ին, երգրումի փաշային քեհեան<sup>(11)</sup>, շատ հայսեր, կը տեղեկանայթէ Դարանազի այնպիսի անձ է որ զԱլէ

(8) ամբ, յամր «հրաման, հրամանագիր»:

(9) «Արձանագրել»:

(10) ուլիմա, եխլէմա, սկզբնական իմաստով՝ «զիտուններ». ընթացիկ առումով՝ «մահմետական ուսեալ և բարձրաստիճան կրօնաւորներ»:

(11) փաշայէն ետք ամենաբարձր պաշտօնատարը:

ահնաման<sup>(12)</sup> ի ձեռին ունի, որ Ալէ ձեռապիրն<sup>(12)</sup> է, կու չըջեցուցանէ ընդ իւր եւ ընթեռնուու կուտայ, որ ամենայն ոք զիտացին զամենայն պատուէրոն նորա որ վասն Հայոց » (էջ 155—156): Քէհան, երզնկա գտնուած տահն, իրեն այցելող հայ վաճառականներէն կը փափաքի իմանալ թէ ո՛ւր կը գտնուի Դարանազի և կը յայտնէ թէ կը ցանկայ Ալիի ձեռագիրը տեսնել:

«Զմեզ հարցեր և զԱլէ զիրն<sup>(12)</sup> թէ խիստ կարօտ եմ փափաք այն զըին տեսոյն որ զիմարդ լինեմ» (էջ 156):

Վաճառականները կը խօստանան բերել տալ և կը զըեն Դարանազի ին թէ աքոհեան զԱլէ զիրն<sup>(12)</sup> կ'ուզէ տեսնալ. ա՛ռ և եկոյ որ տեսնու» (էջ 156):

Երբ Դարանազի զիրը ցոյց կուտայ, քեհան այորժամ էառ զիմնդրելին և երաց, ետես և սոսկացաւ և համբուրեաց և եղիր աչացն և այնպէս վարկաւ՝ զըեթէ զնոյն ինքն զԱլէ զիրն<sup>(13)</sup> ետես, և յարեաւ զերծանութիւն արար ի լուր ամենեցուն» (էջ 157): Ե. — էջ 210—212.

Սուլթան Օսման Բ.ի սպանութենէն վերջ (20 Մայիս 1622), ըմբոստ ենիչէրիները նոյն տարւոյն Հոկտեմբեր 22ին հրաման կ'արձակին, յանուն Սուլթան Մուսավարի թափա Ա.ի, մանկաժողով Կատարել քրիստոնեաններէն:

Երգրումի փաշալըզին<sup>(14)</sup> կուսակալը՝ Ապազա փաշա թոյլ չի տար որ իր իշխանութեան ենթակայ նահանգին մէջ մանկաժողով կատարուի: Հայոց էֆէնտին ալ, որ Տիգրաբէքիրի փաշալըզին զլուխը կը զանուէր և նոյնպէս Հայոց շատ բարեկամ էր, կ'արգիլէ մանկաժողովի պաշտօնեաներուն մուտքը իր փաշալըզին եւ մօտակայ գաւառներուն սահմաններէն ներս: Կիւրճի լինմետ փաշա<sup>(15)</sup>, որ կ'ատէր Հայերը եւ

(12) Այս չորս տեղերն անդամ ալի տըպագրուած է:

(13) Տպագրուած է զիխազըրզ:

(14) Փաշալըզ Օսմանեան կայսրութեան վարչական հին բաժանումներէն մին, աւելի ընդարձակ քան Ալիլիքը:

(15) Կիւրճի լինմետ փաշա, որ վրական ժազում ունէր և կը կոչուէր նաև Հատըմ (կուրճ) լինմետ փաշա, մեծ-եղաբերոս եղած է 28 Հոկտեմբեր 1622ին և հրաժարած է Փետրուար 1623ին: Օսմանեան կայսրութեան ամենէն կարող պետական մարդոցէն մէկը եղած է:

զանոնք իսպառ ընաշխնջ ընել կը ցանկար, տեսնելով որ մանկաժողովի միջոցաւ պիտի չյաջողի իր նպատակին հասնիլ<sup>(16)</sup>, կը խորհի տնտեսական ձնչումով կործանել զանոնք. ուստի կը հրամայէ երեք տեսակ խարանի<sup>(17)</sup> ենթարկել Հայերը, մարդ գըլուխ պահանջելով տասը. հինգ կամ երեք զրուշ (է). Խարաճին հաւաքիչը այնքան բարի և գթասիրտ էր, կ'աւելցնէ Դարանազգի, որ շատ անզամ աղքատներուն տուրքը իր քսակէն կը գնարէր. Դարանազցի անոր կը դիմէ միասին տանելով Ալիի զիրը.

ԱԵԼԻԱԼ մեր զնացաք մօրն և զԱԼԻ զիրն տարաք» (էջ 211). Այս զիմումէն ետք, Հալապ էֆէնտին, միւ փթին<sup>(18)</sup>, Խալիլ փաշա<sup>(19)</sup> և տեֆթերտար պեքիրը<sup>(20)</sup> զզիրն Յալին (էջ 211) առնելով, կը խնդրեն ուութան Մուրատ Դ.է., որ յաջորդած էր Մուսթաֆային, 11 Սեպտեմբեր 1623ին, տասերկու տարեկան հասակին, նուազեցնել Հայերէն գանձելի խարանին սակը, և կը յաջողին(1626):

Դարանազցի երկու անզամ ևս կը յիշէ Ալիի անունը, էջ 219, ուր կը պատմէ թէ Ապագա փաշ երազին մէջ «Հազրար Յալին տեսած է, և էջ 540, ուր Ալին կը յիշէ Մուսհամմատին օրը (Տպագրուած են զբոխագրով): Փամանակագրութեան մէջ չինք հանդիպիր ալի ածականին, եթէ ճիշէ որ հոն զործածուած բոլոր ալիները և յալիները ուրիշ բան չեն բայց եթէ Ալի յատուկ անունին սեռականը, ինչպէս կը հետեւի վերոյիշեալ բոլոր յառաջբերումներուն մէջ այս բառերուն զործածութենէն:

Բայց կարելի է առարկել թէ արտակարգ զուգագիպութեամբ մըն է որ ալի

(16) Ասիկա Դարանազցիի վերագրումն է, Մանկաժողովին նպատակն էր ենիշէրիներուն թիւը և անոնց ազգեցութիւնը աւելցնել, կարելի չէր մանկաժողովով Հայերը կամ ուրիշ ժողովուր մը ընաշխնջ ընել.

(17) Խարանը ոչ-մեռտեսականներէն գանձուած զիխանարկն է: Խալամական պետութեանց մէջ խարանը ի սկզբան տարբեր իմաստ ունէր:

(18) Կրօնական օրէնքին (ԺԵՐ) մասնագէտներ, որ մերկա (օրինական խորհրդակցութիւն) կուտային, կը կաչուէին միմքի:

(19) Նախկին մեծ-ժողովակալ և մեծ-եպարքու օրինական ժագումով, ձնած Զէյթուն:

(20) Ելեմտական բարձրագոյն պաշտօնատար:

## ԽՈՐԵՆԱՑԻ, ԵՂԻՇԵ

ԵՎ

### Հ. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆԵԱՆ

#### Ա. ՄԹԱ

##### ԵՂԻՇԵ ԵՒ Հ. ՆԵՐՆԵՍ ԱԿԻՆԵԱՆ

Ի՞նչ արժէք որպէս պատմութիւն: Ի՞նչ արժէք որպէս գեղեցիկ գրականութիւն: Ոչ մէկ արժէք: Երկու ճակատի վրայ աւ: «Այժմեան խմբագիր Եղիշէն կեղծիք է, զուրկ պատմական արժէքէ» (207): «Այս կերպարանքի մէջ պատմուած քը աւելի ճարտասանական շարագրութիւն քան պատմական գրուած ք կը ներկայանայ» (521):

Իսկ որպէս գեղեցիկ գրականութիւն հարկ կա՞յ կրկնելու Հ. Ակինեանի գաղափարը, երբ համբակ խմբագիրը կը խորովէ նոյնիսկ քերականական կանոններու իր տղիսութեամբ:

«Խմբագիր Եղիշէի մէջ ոչ միայն լեզուն ասպարէսներով հեռու է ե. զարու լեզուի նկարագրէն, այլև կը զանազանուին Զ. գարու հեղինակ սուրբ և ականանու պատմազիր Եղիշէի և ի. գարու խըմբագիր սուր, երազան Եղիշէի լեզուներու մէջ ինքնատիպ հնչիւններ» (206):

Հետեւեալը մեզի անհասկնալի է.

«Իսկ բնագրին ստացած տխեղ կերպարանքը, իրողութեանց շփոթ ցուցադրութիւնը . . . կը բերեն բիծ ճարտար

մանըուր, ևն. ասութեանց մէջ ալի համազօր է Ալի անձնանունին սեռականին և թէ ալի, յալի բառերը միայն օբարձը, բարձրագոյն» կը նշանակին:

Փարատելու համբար այսպիսի կառկածներ, եթէ գոյութիւն ունին, յաջորդ յօդուածով կը քննենք Փամանակագրութեան մէջ ալի կամ յալի մանըուր և ալի կամ յալի անձնանու, ալի զիր, ալի ձեռազիր ասութեանց մէջ զործածուած բառերը և անոնց վերաբերեալ տեղեկութիւնները:

Բարիզ

ՀԱՅԿ զերՊէրեԱՆ

մատենագրի անուան, որ հայկաբանութեան և գեղեցիկ ոճի հեղինակ ճանչուած է» (522):

Ո՞ր ճարտար մատենագրի: Իսկակա՞ն Եղիշէի: Բայց անկէ ճանաչելի զրութիւն մը չունինք, ըստ Հ. Ակինեանի, որ հայկաբանութեան և գեղեցիկ ոճի հեղինակ ճանչցնէր զինք մեզի: Չէ՞ որ Սկզբնագիրը խարդախուած է: Միթէ ըսել կ'ուզուի թէ ճարտար մատենագիրը խմբագիրնէ, որու վարկին թիծ կը բերեն բնագրին ստացած տիշղձ կերպարանքը և իրազութեանց շփոթ ցուցագրութիւնը:

Այս անշուշտ աննշան զիտողութիւն մ'է Հ. Ակինեանի բանասիրա-վերլուծական լարիւրինթոսին մօտ և մենք այնքան ալ բժամնդիր չենք ըլլար կանդ առնելու, այլ յիշելով կ'անցնինք:

Հ. Ակինեան, որ այնքան կը սիրէ հեղինակներէ բազդատական հատուածներ քով քովի զնել իրեն առաջազրած ունէ տեսակէտ մը ապացուցանելու համար, կը զլանայ Եղիշէի բնագրին և խարդախուածէն նմոյշներ տալ, որը այս պարագային չափազանց ձեռնտու պիտի ըլլար իրեն:

Զի կրնար ըսել թէ բնագրիր թոհ ու բոհ է և անճանաչելի, քանզի խմբագրուած Եղիշէի Գ. Յեղանակէն 44 առղ կ'արտագրէ և կ'ըսէ թէ «տողերս Սկզբնագիր Եղիշէին կը վերաբերին» (217):

Կ'երեւի խմբագրի անզգայշ մէկ վայրկեանին հանդիպեր է, որ այս 44 առղերու մէջ յիշատակուած Մողակետի խօսքերը եղածին պէս ձգուեր է:

Լաւ որ խմբագրողը չէ զրած այն շուգեպինդ արագութեամբ որ Հ. Ակինեանի երկու հատորները անհաճոյ սխաներով կը լիցնէ: Զօր օրինակ, ի՞նչպէս բացատրել հետեւեալը բացի հմտառատ Հօր ճեպընթաց վազքով:

Հայր Ակինեան կը խօսի Եղիշէի և Բարձումայի մասին: Մծրինի Եպիսկոպոս Բարձուման մեռած է 492 կամ 494 թուին (61): Հ. Ակինեան կը գրէ: «Բայց թէ Բարձուման հանդիպած է Մոկաց լեռներու վրայ ճգնող Եղիշէի մը, եղած է ճուռա հայերէնի, կարգալ և հասկնալու չափ Եղիշէի մատենը, այս կը մնայ վիճելի» (63): Շատ բարի: Բայց անմիջապէս կը չարունակէ: «Այն անզիճելի է սակայն, որ Եղիշէի մատենը 590էն առաջ հրապարակ չէր կրնար

եկած ըլլալ»: Շատ ոչ-բարի: Եթէ անզիճելի է, որ Եղիշէի զիրքը 590էն վերջ հրապարակ եկաւ, ալ 494ին մեռնող Բարձումայի զայն տեսնելը վիճելի չի կրնար ըլլալ, այլ անկարելի:

Քչիկ մը ուշագրութիւն որքան չարչարանք պիտի խնայէր ընթերցողին և, ինչո՞ւ չէ, նաև Հ. Ակինեանին, քանզի եթէ իր զիրքը տպուելէն վերջ կրկին կարդաց զայն, ի՞նչ կը զգայ ի տես նման յայտաբարութիւններու:

## 7

«Սկզբնագիր Եղիշէի ձայնը պէտք է լսել աւերակներու տակէն» (207), կը գրէ Հ. Ակինեան:

Շատ լաւ: Կը խորհիս թէ՝ իր հիմնական թէ զը ապացուցանելու համար աս միակ տըրամարանական քայլն է: Այսինքն՝ Սկզբնագիր Եղիշէին գոյութիւնը կրնայ փաստուիլ միմիայն ներկայ մեր ունեցած Եղիշէին ուսումնասիրելով: Քանզի Սկզբնագիր Եղիշէին ուրիշ գրութիւններ չունինք և ոչ ալ միւս հին հայ մատենագիրներու մէջ ունէ յիշատակութիւն կայ այս խսկական Եղիշէի մասին:

Զեռքս ունեցած Եղիշէն 153 էջ է, (Վենետիկ, 1859):

Սկզբը երկու էջը, 5 և 6, որ ընծայականն է, մնացած է անզիթար, կ'ըսէ Հ. Ակինեան, «Խմբագրիչը հարկ չէ տեսած փոփոխելու զայն, որովհետեւ նկատած է ամբողջն այլաբանական» (131):

Մակամայական յայտաբարութիւն մ'է, որու համար ո եւ է փաստ չունի Հ. Ակինեան բացի իր խօսքը: Որովհետեւ սոյն ընծայականին մէջ ժամանակի մասին ունէ ակնարկութիւն չկայ, Հ. Ակինեան յարմար կը դատէ բարենիշ մը տալ անզութ, անզէտ և չարագործ զեղծարաբին, որ այս երկու էջը չէ չարագոխած: Թէև կ'ակնեկաւէինք որ Հ. Ակինեան այս երկու անզիթար մնացած էջերու ցուցագրած սքանչելի հայկարանութիւնը — չէ՞ որ խսկական Եղիշէին են սոյն դոյլ էջերը — բաղդատէր փոխուած էջերու անձարակ հայկաբանութեան հետ: Ինչո՞ւ այս պատեհութիւնը փախցուցեր է, երբ այդ այնքան պիտի սատարէր իր առաջազրած հնթագրութիւնը զօրացնելու:

Անցնիք:

Ա. Յեղանակը, ինչպէս տեսանք վերև, Հ. Ակինեան կ'ըսէք թէ և Ամբողջը կը համարիմ խմբազբէն»: Ինչո՞ւ Ռուգհեան սինքն իւր մէջ չի կազմեր ամբողջութիւն, միասնական միտք, չ'ամփոփեր սրոշ ժամանակ: Չունի նաև ինքնայտուկ սկզբնաւորութիւն պատշաճ եղիչէի ճառագրական ոճին» (143):

Բայց Հ. Ակինեան կ'առաջեցնէ մեզ իր հնարամիտ կարողութեամբ երբ մինակ վեց էջնոց Ա. Յեղանակին մէջէն 19 տող վեր կ'առնէ. «Նաև արջք օրհասականք. Կայլն» . . . և կ'ըսէ. «Եղիչէի այս ամբողջ հատուածը, ինչպէս ինձի կ'երեւայ, նախնաբար կը գտնուէք վերջարանին մէջ, ուստի մասն էր ի. Յեղանակին. խմբագրողը չէ հաւանած և զետեղուած է Ա. Յեղանակին մէջ, բոլորովին անյարմար տեղ մը» (67):

Ի՞նչ կրնանք ըսել: Անցնիք:

Բ. Յեղանակ: «Այժմիհան օրինակին մէջ Բ. Յեղանակին նիւթ մատակարարած է նաև Ակզրնազբին Ա. Յեղանակը» (148): Ինչէ՞ն զիտէ Հ. Ակինեան Ակզրնազբին Ա. Յեղանակը, և ի՞նչ հիման վրայ կ'ըսէ թէ այդ նիւթ մատակարարած է այժմու Բ. Յեղանակին: Զոր ինչ ասացի՝ ասացի:

Գ. Յեղանակ. «Վասն Միարանութեան Սուրբ Աւատին Եկեղեցւոյ», Հ. Ակինեան կ'ըսէ. «Կ'ենթազրէ և է՝ արդեամբք այն ուխտն, որ կնքուեցաւ 572ին Հայոց և Յունաց մէջ» (151):

Ա՞ս, աւերակներու տակէն Ակզրնազբի Եղիչէի ձայնն է որ կը լսէ Հ. Ակինեան, բայց չյօժարիր սոյն Գ. Յեղանակը վերլուծելով ըսել թէ, ահա այս և այս ուղերու հիման վրայ է որ 572 թուականի ուխտին կը վերագրիմ այս Յեղանակը:

Բայց հսու ալ Հ. Ակինեան հիմալի ճարպիկութեամբ 40-50 տող վեր կ'առնէ ուր Մոգպեալը կը խօսի, և կ'ըսէ. «Ծողերս Ակզրնազբի Եղիչէին կը վերաբերին. տեսարանը Դունոյ առջն կը կատարուի»:

Երախտապարտ ենք, Հայր, թատերաբեմն ալ սրոշելուց համար, քանզի որքան մտքի քրտինք թափեցինք յիշածդ տողերու և ամբողջ Գ. Յեղանակի վրայ, չկըրցանք քաղաքը որոշել:

Գ. Յեղանակի, որ միայն վեց էջ է, պարունակութեան մասին չէ որ խմբագրիչը

կը ձաղկէ, այլ վերնագիրը չարափախելուն համար, որը մեզի գարմանք պատճառեց: Ներկայ վերնագիրն է. «Վասն երկպառակութեան իշխանին Արևելաց և անօրէն ընկերաց իւրոյ»:

Հ. Ակինեան. «Դ. Յեղանակ. Երկպառակութիւն ումանց բաժանելոց ի նմին սուրբ ուխտէ: Խմբագրիչը, որ Եղիչէի Վարդանանցէն Վասակագիրք մը յերիւրել կը ձգտի, այս խոստաբանութիւնը խեղաթիւրած և վերածած է. Վասն երկպառակութեան իշխանին Արևելաց և անօրէն ընկերաց իւրոյ» (153):

Ի՞նչ պէտք մեկնաբանութիւններու: Անցնիք:

## 8

Որքան յախուռն և զնուական է Հ. Ակինեան: Արդեօք երկար տարիներ բանասիրական գաշտերու մէջ աշխատի՞լն է զի՞նք այս քան յանձնապատան գարձուցած, այն աստիճան որ չի վարանիր կարական վճիռներ արձակելու աջ ու ձախ:

Բ. Յեղանակի մէջ կը գտնուի Միհրնիկունիկ նամակը և Հայոց պատասխանը սոյն նամակին: Այս երկու նամակները կը դրաւին տասներկու էջ:

Հ. Ակինեան կ'ըսէ թէ Միհրնիկունիկ նամակը կելովիք է (սոսրագնումը իրեն) և խմբագրին ստեղծագործութիւնը (592): Հայոց պատասխանն ալ յօրինուած է խմբագրէն (629):

Շատ լաւ, թող անանկ ըլլայ: Բայց մեր զարմանքը չինք կրնար զսպել երբ հնարակէտ Հայրը իր կողմէ հետեւեալ զաղափարը կը յայտնէ. «Ինձ կը թուի թէ ոչ թէ Պատասխանն նամակէն, այլ ընդհակառէլ նամակը Պատասխանէս ետքը գրուած է» (629):

Ի՞նչ հարկ կար այս և ինձ կը թուի յին: Մեղք չէ՞ մեզի, որ արգէն լարիւրինթոս մը առաջնորդուած ենք, ուրկէ ոչ միայն ինքզինքնուս գուրս հանելու կը ջանանք, այլ նաև մեզ հոն առաջնորդողը:

Հայ բանասիրութեան մէջ թերեւս աննախընթաց բանալքասիկ եւ կամայական վերլուծման կարկառուն օրինակը մեզի կը հայթայթէ Հ. Ակինեան, երբ Ակզրնազբիր Եղիչէի եօթը Յեղանակներու ժամանակը կուտայ (145):

Ա. 540—570 ժամանակ :

Երեսուն տարուայ չըջան : Ուսկից կը ճշգէ այս ժամանակաշրջանը : Մեր ունեցած Եղիշէի Ա. Յեղանակէն : Այդ Յեղանակը ընդամենը մինակ վեց էջ է, ուր առաւելապէս կը խօսուի Թազկերտ թագաւորի մասին : Աչ մէկ գոյզն ցուցմունք վերոյիշեալ 30 տարիներու գէպիքիու մասին : Եւ արգէն Հ. Ակինեան ինքն իսկ ակնարկելով Ա. Յեղանակին և Բ. Յեղանակի առաջին վեց էջերուն՝ կը վճռէր . Աչ մի պատմական արժէք չունի այժմ Պատմութեան 7—18 էջերը» (582) :

Բ. Յեղանակ, 570—572.

Գ. Յեղանակ, 572—576.

Դ. Յեղանակ, 575—576.

Ե. Յեղանակ, 576.

Զ. Յեղանակ, 575—576.

Է. Յեղանակ, 577—595 :

Որպէսզի կարելի ըլլայ ուեէ բանասէրի կամ պատմագրի լուրջ նկատողութեան առնել վերեւի չարքը, Հ. Ակինեան զանոնք հետեւցուցած ըլլալու է մեր այժմիհան առաւերակոյտու, սթոհ ու բոհ Եղիշէի պարունակութեան գիտական վերլուծումէն :

Աս չէ ըրած, որովհետև չէր կրնար : Իրեն հնարած վարկածը ապացուցանելու համար ցուցմունքներ չգտնելուն՝ ստիպուած պեղծիք, զեղծարար, աւերակոյտ, թոհ ու բոհ, և այլն Եղրակացութիւններու անթացուազը կը գործածէ, որպէսզի ներկայ Եղիշէի ապացոյց ու զողներուն կարենայ պատասխանել թէ, Եղրայր, ի՞նչպէս այդ թոհ ու բոհեալ աւերակոյտէն մէջբերում կրնամ ընել, երբ զեղծարարը այնքան անխոն ճօրէն վերիվայր չըջած է ամէն ինչ :

Աւստի<sup>8</sup> :

Աւստի մուստի չկայ, Կ'ընդունիս ըստածներս և այդպիսով Եղիշէի մատեանը որպէս պատմական ազբիւր ոչնչացուցած կ'ըլլանք :

Եթէ Հ. Ակինեան սկսնակ բանասէր մը ըլլար, իր այս 779 էջ գիրքը կարդալէ վերջ (տակաւին Գ. Հատուն ալ պիտի գայ) առանց խղճահարութեան և ամինայն լըրջութեամբ պիտի թելադրէինք .

Ա Բանասիրութիւնը երիտասարդ Ակինեանի յարմար ասպարէզ մը չթուիր ըլլալ,

դատելով այս երկու հատորներէն : Կը զընահատենք իր եռանդը, բայց վեսսակար կը համարինք զայն հեղինակին, երբ անոր կը ստիպէ անհաւանական վարկածներ որդեգրել, և զանոնք ապացուցուած տեսնելու փութաջանութենէն մղուած զինք բռնազրոսիկ Եղրակացութիւններու կ'առաջնորդէ : Կամ զինք փորձութեան կը ձգէ՝ կարծիքէն իրողութիւն մը հաստատելու, փոխանակ իրողութենէն՝ կարծիք : Եւ մանաւանդ իր զարգացման համար վասսակար կը գտնենք իր չողեալինդ արագութեամբ գրելը, որ յաճախ հակասութիւններու մէջ կը գլուոք հեղինակը :

Խորենացին և Եղիշէի վերաբերմամբ Հ. Ակինեանի ելոյթը նկատի ունենալով, զմբախտաբար վերի մտքերը բարեփոխելու ճամբար մը չենք տեսներ :

Մենք գոհացանք մի միայն իր զիրքը քննելով, ցայց տալու շփոթը որ կը տիրէ հեղինակին մաքին մէջ, սկսած իր անհաւանական ենթադրութենէն, մինչև խառնափնթոր հակասութիւնները :


Մեր հին պատմութիւնը արգէն մթին կէտեր շատ ունի, հարկ չկայ զանոնք ալ աւելի մթագնելու հաւաճեպ մտամարզանքներօվ : Տրամարանական և մեթոսիկ վերլուծումէ պէտք չէ չեղինք նոյնիսկ եթէ Եղրակացութիւնը սիրելի չըլլայ մեզի : Մեր բանասիրութեան ճամբան խոչնդոտներով լի արահետ մ'է, ուր պէտք է ընթանանք քայլ առ քայլ, և ամէն մէկ քայլ միւսին արամարանօրէն օդակուած :

Մենք երջանիկ պիտի համարինք ինքզինքնուո՞ւ եթէ Հ. Ակինեան յաջորդ զեղծարարի ետեւէն երթալուն մօտենայ իր ծանր աշխատանքին որպէս գիտնական մը :

Այդ կը պահանջէ, ի միջի այլոց, Հայ Պատմութիւնը :

ՀՐԱՆ.Դ. Ք. ԱՐՄԵՆ

(8)



## ԿՐՈՆԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ՄԱՂԱՔԻԱՅԻ ԳՐՔԻՆ ՇՈՒՐՋ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ - ՄԱՐԴՔԱՅԻՆ

— — — — —

Իր նկարագիրը և անձնաւորութիւնը  
ուրուազգելու աշխատանքին մէջ, մեծ  
գմուարութեան մը կը բախինք՝ կենսա-  
գրական ծանօթութեան պակասին. և սա-  
կայն, ուսումնասիրութիւնը իր երկին, որ  
կը ցոլացնէ գէթ՝ որոշ չափով, իր հոգեկան  
ուրոյն կառուցուածքը, իր զանազան ե-  
րանգաւորումներուն մէջ, պիտի բնըք մեզի  
իր նպաստը մարդարէին անձնականութեան  
բիւրեղացման ճիգին մէջ: Մաղաքիայ եփր.  
ՌԱԿԱԼՄ կը թարգմանուի «Հրեշտակս կամ  
պատգամարերս» կը հանդիպինք նոյն քա-  
ռին Մազ. լլ. 1: Զենք գտներ համոզիչ,  
յատուկ անուան մը այսկերպ գոյութիւ-  
նը: Հաւանականութեան նժարը կը հակի,  
ՆՌԱԿԱԼՄ կրմատուած ձեւը նկատելու  
համար բառին, որ կը նշանակէ, «Ենովայի  
պատգամարերը, կամ հրեշտակը»: Արդա-  
րեւ, ծնողքի մը կողմէ տրուած նմանօրի-  
նակ անուանակոչում մը, պիտի ենթադրեք  
ցուցամոլական բռնադրոսիկ տրամադրու-  
թիւն մը լոկ, քանդելով, սակայն, կիրքե-  
րու և նկատումներու փաքրոզի տարողու-  
թիւնը, այսպատրապային, տարբեր տեսա-  
կէտէ մը դիտուած՝ աստուածայինէն, Հին  
Աւխտի գրականութիւնը կ'ընձեռէ մեզ նոյն  
տեսակի բառակերտումներու շարք մը, ե-  
նովայի համակրութիւնը և մտերմութիւնը  
հաստատող իրենց թելագրութեամբը: Ինչ-  
պէս՝ ՀԻՃԱԿ «Ենովայի ծառան»: ՈՐՈՇ «Ե-  
նովայի եղբայրը կամ բարեկամը»: ԼԱՆՈ  
«Ենովայի գէմքը»: Խորագրի վերոյիշեալ  
ստուգաբանական ձեւը արտագրուած է  
նոյնութեամբ LXXի, հայերէն, զպտերէն,  
լատիներէն թարգմանութիւններուն մէջ,  
իսկ Յովեաթանի թարկումը, ածականարար  
կը գործածէ Մազաքիայ անունը, վերա-  
դրելով զայն եղբաս զպրին «Պատգամարերիս  
միջոցաւ, որուն անունն է եղբաս զպիր»:

Արդարեւ, պատմականութենէ զուրկ է այս  
հաստատումը:

Մարգարէութեան ներածականը, լ. 1,  
իր սերտ հանգիտութեամբ Զաք. Խ. 1 և  
XII. հատուածներուն հետ, անանուն դրոշ-  
մով մը կը պարուըէ գրուածքը, հաւանա-  
բար, այս անորոշութիւնը փարատելու չերմ  
առաջազրութեամբ, անծանօթ գրիչ մը,  
Մազ. լլ. 1 պատգամարերու գոյականը,  
խորհրդանշաբար գործածած ըլլայ, անյայտ  
հեղինակը բնորոշելու:

Անմիջական տպաւորութիւնը իր մար-  
գարէութեան՝ խանդավառ հայրենասէք մը,  
խորունկ կրօնական խառնուածքի մը հը-  
մայքրովը օծուն, անյողզող և հաստատ  
իր համոզումներուն մէջ, ուխտեալ աւան-  
գապահը հնաւանդ իր կրօնքին, սրբութիւն-  
ներուն, բառքերուն, ձախորդութիւններու  
և յուսախարութիւններու փոթորիկներէն չի  
տատանող:

Հերքելի կը թուի այն ենթադրութիւնը,  
որ զայն արտաքնապաշտ ծիսամոլի մը կը  
վերածէ: Պահ մը, եթէ լուրջ նկատողու-  
թեան առնենք ժամանակի այլասերիչ աղ-  
դակիները, հեթանոսական ապականիչ կեն-  
ցաղի այժմէական ներգործութիւնը, տըն-  
տեսական և քաղաքական ստորագաս խեղճ  
գամհաւիժող անկումը, երկիւղած նախազ-  
գացում մը, կ'իմաստաւորէ մեկ, եղաշր-  
չեց գերը ծէսին, արարողութեան, զոհին,  
ուրիշ խօսքով, տաճարին, իրրեւ կեղրոնա-  
գայր, իրրեւ ներշնչարան, ազգային և կրօ-  
նական ինքնութիւնը անեղծ պահելու աղ-  
նիւ փասախիրութիւններ սնուցանող միակ  
լաստը փրկութեան. Արդարեւ, հեղինակին  
հասկացողութեան մէջ, ծիսակատարութիւ-  
նը ինքն իր մէջ տարամերժօրէն ինքնա-  
նպատակ ամուլ հետապնդում մը չէ, մե-  
քենական ունակութեան մը պատրանքովը  
գոյաւոր, այլ յարդ աւելիովը կրօնական ըզ-  
գացումի կենսաւորուած է ան, ուռնացած,  
գեղեցկացած, որ զկզրունքային է ոյթն իսկ  
կը կազմէ երկին, ուր այրիները և որբերը  
կեղեքովներուն, երդմնազացներուն, չնա-  
ցողներուն, ուղղուած չարագուշակ պա-  
տուհասը Ենովային, ահաւոր գատաստանի  
օրը, արտայայտութիւնն իսկ է ոգեղէն ձը-  
գողութեան այն մազնիսացումին, որ ար-  
ժէքներու ուղիղ դասաւորում մը կը պայ-  
մանաւորէ, իրողութիւնները և երեսոյթնե-

բու ըմբռնելու իրենց յատակութեան, պարզութեան, և կոչումին մէջ:

Ф.И.О. К.А.Ч.А.Г.

Յետ գերութեան շրջանին կը պատկանին  
զրուած քը . Յուղայ, պարսկական լուծին  
ներքն, հռո-ով մը կը կառավարուի,  
Անդ . I. 1<sup>o</sup>, Նեհ . V. 14: Տաճարը վերա-  
կառուցուած է, Մաղ . I. 10, IV. 1, 10:  
Քահանայական գասու անփթութիւնը մաս-  
նաւորապէս, յատուկ յիշատակութեան  
կ'արժանանայ . Մաղ . I. 6-8, 12-13, II.  
1, 8: Ընկերային խաթարումներու նկատ-  
մամբ, ուշագրաւ է մատնանշչել, Մաղա-  
քիայի երկին, սերտ աղերսը Եսրազի և  
Նեհէմիայի մարգարէութիւններուն հետ .  
Պարտազանցութիւնը կրօնական, տասանոր-  
դը վճառելու Մաղ . II. 17, IV. 7-10, 14:  
Նեհ . X. 32-39, XII. 10-13, օտար ա-  
մուսնութիւններ, Մաղ . II. 10-16, Եզր .  
IX-X. Նեհ . X. 28-30, XIII. 23-31, Ըն-  
կերային հարստահարութիւնները Մաղ . III.  
5, Նեհ . V. 1-13: Դիպուածային չէ գա-  
ղափարային այս զուգազիպութիւնը, այս  
որոշապէս կ'ենթագրէ նաև ժամանակազը-  
րական նոյնութիւն: Տաճարի վերակառու-  
ցման լրման թուականն է 515. գրքի նըմ-  
բագրութիւնը կը յայտնէ 458-445 միջնէ:

Վերոյիշեալ բարեկարգիչներու գործունէութեան անձնուէր և անշահախնդիր ռահվիրան եղաւ Մալտաքիան . Երկրորդումն Օքինացի ոգիին կը պարտի ան , որոշ արտայայտութիւններ և ըմբռնումի ձեւեր , Ենոքայի սէրը Մազ . 1. 2 , Երկր . Օրի . VII . 7 , 8 , 13 , X . 15 : Խօրայէլ բասի գործածութիւնը , Ընտրեալ ժողովուրդը մատնանշող , և քահանայութեան նկատմամբ իր կիցուածքը , Մազ . II . 4-7 , Երկ . Օրի . XVIII . 1 , XXI . 5 , XXX . 8-11 : Քահանայ և Ղեփի Եզրերը հօմանիչ են իրարու , Հեղինակի մտքին մէջ , ինչ որ յետնագոյն օրէնսդրութիւնը Օհարոնի որդիներուն կը վիճակէ այդ պաշտօնը :

080

Պարզ, սեղմ, արձակունակ, պակաս  
գեղագիտական յղկումի, մասնաւոր ճիգ մը  
տրամասաց ոճով արտայալունելու, որ կը  
դտեղձէ գրուածքին չուրջ որոշ խանդա-

ՅԱՐԴԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԽԱՅԻՉՈՒԹՅԱՆ

910100 0.

XIV. 28. կը գործածուի երեք նախաղրութիւններով, Ե IX. 1 Զաք. Ել Զաք. XII.  
1. **ՆԱ** Մաղ. 1. 1.—1) Այս հատուածին  
մէջ, LXX-ի չունի թարգմանութիւնն է Ել, ի,  
քանի թէ **ՆԱ**:

ЛXX. Χοδὶ . Τῷ . ἐθνῷ αὐτῷ . Ηρωαρκερὲν κρι-  
ζωροινωκέν . Θέσθε δὴ ἐπὶ τὰς καρδίας ὑμῶν  
δὴ μωανθίκερε κρι- αὐτάκουσι ουακωγῆν Χοδὶ . Τῷ .  
κρι- εθνῷ αὐτῷ . μέχι :

2) Զեր սիրեցի, կը յայտաբարէ եհովան. — մինչ կ'ըսէք դուք: Ինչո՞վ սիրեցիլը մեզ — Եսաւ Յակոբի եղբայրը չէ արդեօք, եհովանի պատգամը. արդ սիրեցի Յակոբը  
3) Իսկ Եսաւը ատեցի.

2). — Այժմէական ու խորապէս զը-  
րական է համակրանքը եհովայի իր ժողո-  
վուրզին նկատմամբ, իսրայելի անցեալը

ապկայն, այլապէս ճոխ է ու բեղուն նմանորինակ պարագաներով՝ Ավս. III. 1. Երկրորդ, Օրի. IV. 37, Երեմ, XXXI. 3: «Մինչ կ'ըսէք դուք: Ինչո՞վ սիրեցիր մեզ»: — Հարց-պատասխան, տրամասաց մտածելակերպի ուրուգովում մը: Աքսորէն վերագրածին, մեսիտական ակնկալութիւններու յափաղումը, յուսախարութիւնն և թերահաւատութիւնն — հեշտամոլ և նիւթապաշտ, ազգի մը անողոք լուծը կը խաթարէ իրենց կեանքի անդորրութիւնը. Ծերեզայի երկուորեակները, նախասահմանուած նախահայրերը երկու ազգութիւններու, Եսաւը՝ Եղովմի Ծնն. XXXVI. 1, 8, 19, իսկ Յակոբ Իսրայէլի Ծնն. XLIX. 7, Թուոց XVIII. 7: Խանոսւած քող և աշխարհահայեացքով հակապատկեր՝ այս ցեղերը, մին՝ (Եսաւը) սուրի՝ բազուկի՝ երկրաքարչ՝ միւսը (Իսրայէլ) վեհաթափիչ, ազնուական, կրօնական ճշմարտութիւններու և բարոյական սկզբունքներու պապակովը տոգորուն. հակօտնեայ այս տարրերը, ատելութեան ու մզձաւանջի թոյնով. արիւնոտած են պատմութեան էջերը, ահաւասիկ Ենօպայի նախընտրանքը, իրերու իսկ կացութենէն: Եղակացուած:

ԱՆՈՒՇԱԽԱՆ ԱԲԴ. ԶԵՂԱԿԱՆԵԱՆ

(Տարու Տակելիի)



## ՊԱՏՄԱԿԱՆ

### ԵՐԻՇԵ ՊԱՏՄԱԳԻՐ

ԵՒ

### ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Իսկ Բաջն Վարդան վութաց Աղուանից երկիրն երթալ, ընդդիմութեան ձեռնարկին սկսած ըլլալուն ուրախացած: Իրեն հետ էին Խորէն Խորխոռունի, Արշաւիր Արշարունի, Թաթոււ Դիմաքսեան, Արտակ Պալունի, Գիւտ Վահեւունի, Հմայեակ Դիմաքսեան և ուրիշ Խախարարներ իրենց բանակներով: Երկու բանակները իրարու հանդիպեցան կուր գետին աջակողմէ՝ Խաղխաղ քաղաքին մօտերը: Բաջն Վարդան իր բանակը երեք մասի բաժնեց, աջ թեւը յանձնեց Արշաւիր Արշարունիին, նոյնինքն իր փեսին Արշաւիր Կամսարականին և անոր օգնական տուաւ Մուշ Դիմաքսեանը. Ճախ թեւը յանձնեց Խորէն Խորխոռունիին, Հըմայեակ Դիմաքսեանին հետ, իսկ ինքը կեղրոնք մնաց իր օգնականներով:

Պարսիկ բանակը Հայերէն աւելի մեծ էր, բայց Հայոց եռանդը աւելի շատ էր: Պարսից և Հայոց բանակները իրարու զէմ ճակատեցան, Արշաւիր և Մուշ ճահիճի մէջ գլուրուեցան և Մուշ սպաննուեցաւ, բայց և այնպէս պարսիկները խուճապահար ետ ընկրկեցան և իրենցմէ շատերը կուր զետին մէջ խեղդուեցան, իսկ նաւերով փախչողներն ալ Արշաւիրի նիզակակիցներէն նետահար կոտորուեցան: Գիշերը վրայ հասնելով՝ Հայերը հանգիստ ըրին և միւս առաւօտ կուր գետը անցնելով նորէն Պարսիկները հալածեցին և անոնք պատերազմի դաշտէն հեռացան, այս պատերազմին մէջ Հայերը կատարեալ յալթանակ մը տարին Պարսիկներու վրայ: Հայերը՝ Հոնաց պահակին մօտենալով՝ անոնց հետ բանակութեան մտան, որ Պարսից զէմ օգնեն իրենց:

Փորձին շարունակութիւնը և տեղւոյն պաշտպանութիւնը Վահան Աղուանին յանձնելով՝ Հայերը Հայաստան վերադարձան: Աղուանից արշաւանքը եղիչէի բացատրութեամբը լրացած էր «յաւուրս իրեսուն» և

երբ Հայերը Հայաստան դարձան, ոի գաւառն Արարատայ, գառնաշունչ օդոյ ձմեռայնույնը (Փար. 67) օրերը սկսած էին, որ է ըսել Եոյեմբերի երկրորդ կէսին, 450 տարւոյ մէջ:

Հայաստանի մէջ Պարսիկները բռնութեամբ կրակատուներ եւ ատրուշաններ կանգնած էին, հակառակ Հայոց ընդդիմութեան կրակի և արեի պաշտամունքը սկսած էր: Հայերը, պետական մասնաւոր օրէնքներով պարտաւորուած էին կանակներով փայտ կրել կրակատուներու համար: Այս պատճառաւ ժողովրդին մէջ մեծ խռովութիւն և տագնապ կար:

Վասակ Սիւնին ինքզինք համակիր ցոյց կուտար Բաջն Վարդանին, բայց ներքնապէս կը դաւեր անոր զէմ, և միւս կողմէն անորոշ կամ աւելի ճիշտ բացատրութեամբ՝ երկդիմի քաղաքանութեան կը հետեւէր: Բաջն Վարդանի մեկնումէն առաջ, մասնաւոր համաձայնութեամբ մը, Պարսկական-Հայաստանի կեդրոնական հրամանաւարութիւնն ալ իր վրայ առած էր: Այսպէս որ, թէ՛ իրեւ Մարզպան և թէ՛ իրեւ Պարսկական-Հայաստանի կեդրոնական հրամանաւատար, կ'աշխատէր ու կը զորձէր իր թաքուն նպատակները իրականացնելու համար:

Վասակ Սիւնին խորամանկ և փորձառուանձ մը ըլլալով՝ չէր ուզեր ազգէն բաժնըւիլ, և անոր ատելի ըլլալ, իսկ միւս կողմէն ալ Պարսկական քաղաքականութեան յարելու բազում պատճառներ ունէր: Յազկերտ արքան, Պարսից արքունիքը և մեծամեծները շատ լաւ զիտէին Վասակ Սիւնին նպատակը ու անոր ունեցած հոգեբանութիւնը:

Ի մասնաւորի Միհրներսէնը զայն կը քաջալերէր և խոստումներ կ'ընէր անոր: Վասակ իրեւ փառասէր անձ իր ծրագիրները ունէր, և զանոնք յաջողցնելու համար՝ միջոցներու մէջ խարութիւն չէր զներ: Վասակ՝ ինքզինքը Պարսից արքունիքին ենթարկուած կը զգար և չէր ուզեր անկէց հեռանալ: Վասակ Սիւնին, հետեւալ պատճառներով կ'ուզէր Պարսկական քաղաքականութեան հետեւիլ:

1. Կը վախնար որ իր Մարզպանութեան պաշտօննը կորսնցնէ:

2. Կը մտածէր իր երկու որդիներուն

մասին, որոնք իրեւ պատանդ կը թնային Պարսից արքունիք, և միշտ վտանգի մէջ կը դժուռէին:

3. Աւխտապահ նախարարները աւելի Յունական քաղաքականութեան յարած էին, իսկ ինք կը կարծէր թէ՝ Հայոց ազգը այս քաղաքականութեամբ աւելի զիւրաւ կըր նար ձուլուիլ Յունականութեան մէջ, մինչդեռ պես պարսկական հօվանաւորութեան տակ աւելի լաւ կրնար պաշտպանուիլ:

4. Վասակ Սիւնին անձնապէս թունդ քրիստոնեայ մը չէր:

5. Պարսից իշխանութիւնը աւելի մեծազօր և տիրապետող ըլլալով՝ միշտ կախում պիտի ունենար անկէ, որովհետեւ երկիրը անոր մօտ էր և սահմանակից:

6. Մանկութիւնը Պարսից գուռը անցուցած էր, և անոր ազդեցութեան տակ մեծցած ու կրթուած:

7. Իրեն եղած խոստման համաձայն յոյս ունէր թէ՝ Հայոց վրայ թագաւոր պիտի ըլլար և անոր կը ցանկար ոչ թէ Հայերուն անկախութիւն բաղձացող ըլլալուն, այլ իր փառասիրութիւնը գոհացնելու համար:

8. Իր փեսան, Վարազվաղան իր կնոջը պատճառաւ Պարսկաստան վախած էր որ Միհրներսէնի հետ մտերմացած էր, կը վախնար որ ան իր ձեռքէն յափշտակէր Սիւնեաց իշխանութիւնը:

### ՅԲ.

Ուխտադրուժ եւ ուխտանենգ նախարարները. — Պարսիկ գերիի մը ազատգրումը եւ Յազկերտին և լողեկատուութիւնը. — Բիւզանդական պատուիրակութեան մը Յազկերտին ներկայանալը. — Յազկերտին մահանգութիւնը եւ անոր խափուսիկ խոստումները:

Վասակ Սիւնին, որ երկերես քաղաքականութիւն մը ցոյց կուտար, Քաջն Վարդանի բացակայութենէն օգտուելով, յաջողեցաւ կարգ մը նախարարներ իր կողմը դարձնել ու շահիլ: Վասակ իրբեւ խորագէտ անձ, ոմանց երկչուութիւնը, ոմանց փառասիրութիւնը շահագործեց: Վարդանէն եւ ուխտապահ նախարարներէն հեռացող տասը նախարարներէն հետեւալները կը յիշուին:

1. Տիրոց Բագրատունի. 2. Գաղիշոյ Խորխոսունի. 3. Մանէճ Ապահունի. 4.

Գիւտ Վահանունի. 5. Վարազշապօւհ Պաւլունի. 6. Արտէն Գարեղեան. 7. Ներսէն Ռուծացի (Փար. 67). 8. Արտակ Ռշտունի. 9. Ընջուղ Ակէացի. 10. Մանէճ Ամատունի (Դ. Յեղ. 174): Ասոնցմէ երեքը, Գաղիշոյ Խորխոսունի, Մանէճ Ապահունի և Արտակ Ռշտունի՝ Պարսկաստան գացող կեղծուրաց նախարարներէն էին: Իսկ ասոնցմէն՝ Գիւտ Վահանունին Քաջն Վարդանին հետ միասին Աղուանից արշաւանքին մասնակցողներէն էր: Դիտուած պարագայ մըն է որ, նախարարական տուներու մէջ, գէպի Յունական եւ գէպի Պարսկական քաղաքականութեան դիմելու միտումներ և նախասիրութիւններ կային, անոնց միջև գոյութիւն ունեցող երկպառակութիւններու եւ հակառակութիւններու պատճառներով: Վասակ Սիւնին Մամիկոնեաններէն, Կամսարականներէն և ուխտապահ նախարարական տուններէն, նախարարագուն պատանիներ և տղաք, Սիւնեաց նահանգը տարաւ, Պարսից արքային պատանդներ տալու համար ռատայ առաքել գտղայն առ թագաւորն պարսից» (Փար. 67): Վասակ Սիւնին, պետական գործառնութեանց մէջ հաւատարիմ չէր, վասնզի՝ պետական գանձին պատկանող ռաճիկները կը խարդախէր, պարսից գունդերը երկրին մէջ ասդին անդին կը ցրուէր, իսկ ինքը Սիւնեաց երկիրը կը մեկնէր, երբ խեղճութիւնը, թշուառութիւնը և նեղութիւնը երկրին մէջ զգալի կը գառնային:

Բացի՝ ուխտագրուժ նախարարներէն, քանի մը ուխտագրուժ քահանաներ ալ կային, որոնք Վասակ Սիւնիին յայտարարութիւնները ժողովրդին մէջ տարածելու պաշտօն ունէին: Ասոնց մէջէն կը յիշուին հետեւալները, Զանգակ Սիւնի, Սահակ Զայնող և Պետրոս Արկ. Երկաթի (Դ. Յեղ. 174):

Ուխտանենգ նախարարներու զօրաց թիւը 40,000 կ'ենթագրուի, հետեւակ և հեծելազօրք, իսկ Հ. Ղ. Ալիշան ասոնց թիւը մինչև 60-70,000 կ'ենթագրէ և զանոնք սեւցած հայեր կ'անուանէ:

Երբ Քաջն Վարդան Աղուանից արշաւանքէն Հայաստան վերագրածաւ յաջողութեամբ և յաղթանակով, Հայաստանի խըստաշունչ ձմեռը սկսած էր արդէն, և անհընար էր ուեէ ձեռնարկ կատարել, ուստի պէտք էր գարնան սպասել, առ այդ նախապատրաստական և կազմակերպչական աշ-

խառանքներ կատարելով։ Վասակ Սիւնին, Միջներսէն հազարապետին տեղեկացուցիր կողմէն կատարուած ձեռնարկները, որով ցոյց կուտար թէ, Հայոց զօրքը արդէն երկուքի բաժնուած էր։ Միւս կողմէն, վասակ Ալւնին, Յունա-Հայաստան գտնուող վասակ Մամիկոննեանին հրովարտակ մը զրեց, ցոյց տալով թէ, բոլոր Հայերը իրեն հետ միացած են և ապստամբական շարժում մը գոյութիւն չունի երկրին մէջ, և թէ Հայերը հաւատարիմ են ու հաւատարիմ պիտի մնան Պարսից տէրութեան և արքայից արքային։ Սակայն այս հրովարտակով վասակ Սիւնին կը դաւեէր իր հայրինիքին գէմ, իրողութիւններուն տալրեր գոյն մը տալով։ Յովսէփ կաթողիկոս, Եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և երեցներ, հայրենիքին փրկութեան համար աստուածային օժանդակութեան և օգնութեան զիմեցին, ժողովուրդը քաջալերելու և զօրացնելու համար սզողջոյն ամիսն Քաղոց պահօք և ազօթիւք առնել խնդրուածս առ Աստուածու։ Սյոյ տարին Քաղոց ամիսը 4 Դեկտ. 450-ին կը սկսէր, որով Յունուար 2 451-ին կը վերջանար։ Սոյն հրահանգը Յունա-Հայաստան ալ զրկուեցաւ ի գործադրութիւն։

Իսկ Բիւզանգիսին նոր կայսրը Մարկիսանոս, խորհրդակութեամբ Անատոլիոս սպարապետին, Եփլալիոս կամ Փլարենտիոս պալատականին, յարմար շտեսաւ Հայերուն օգնել, նամանաւանդ որ Հայերուն օգնելու պարագային 423 թուականին երկուստեք կնքուած դաշնագիրը ինքնին ջնջուած պիտի ըլլար «պահել զուխտն հեթանոսաց, վասն մարմնական խաղաղութեան, քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան» (Գ. Յեղ. 135)։

Մարկիսանոս կայսրը, իր կողմէն մասնաւոր պատուիրակութիւն մը նշանակց Փլարենտիոս Ասորիին զլիխաւորութեամբ և Տիգրոն դրկեց, Յազկերտ արքան վստահեցնելու համար թէ, Բիւզանգական կայսրութիւնը Հայերուն պիտի չօգնէ։ Այս լուրը Հայերուն համար շատ ծանր ճնշեց, վասն զի՞ Հայերը իրենց աչքերը դէպի արեմուտք, Բիւզանգիսին յառած էին։ Բիւզանգիսին իր այս արարքովը Հայերը առանձինն կը ձգէր և Հայերը իրենց յոյսը զրին Աստուծոյ վրայ . . .

Քաջն Վարդան կը զիտէր թէ, երթաւով միւս կողմէն Աւխտազրուժները երթաւով կը շատնացին, ասով հանդերձ ան ցըվերջ գիմազրութեան կողմն էր, այնպէս որ հակառակ Հայաստանի խստաշունչ օգին, ան պատերազմական պատրաստութիւններով զրազեցաւ, թէ լաւ զինուելու և թէ պատերազմիկները շատցնելու համար։ Քաջն Վարդան թէ Սպարապետի պաշտօնը կը կատարէր և թէ միւնոյն ատեն Հայոց հետեւկազօրաց և հեծելազօրաց բանակին իրը հրամանաւար կը գործէր։ Քաջն Վարդան Հայերուն ձեռքը գերի ինկած Պարսիկ զինուորներէն մին ազատեց և զայն ուղղակի նախարարական ժողովի մը առջեւը հանելով անոր մանրամանորէն հասկցուց թէ՝ Պարսիկներու ձեռք առած կրօնափոխութեան բռնի ձեռնարկը որքան ժողով ամսական գանձին և Պարսիկ կառավարութեան, և թէ Վասակ Սիւնին կը դաւէր թէ՝ Պարսից Տէրութեան և թէ հայրենիքին։ Պարսիկ կալանաւորը, Յազկերտին պատուի ամէն բան հասկուց անոր։ Յազկերտ այս լուրերը իմանալով և սուսգելով ցնցուեցաւ, միւս կողմէն արքունի խորհրդականներ ալ զբանըւեցան, որոնք Յազկերտը համոզելու ջանացին, այնպէս որ ատեն մը Յազկերտ թուլցաւ և հրաման տուաւ որ քրիստոնեաներուն կրօնքը ազատ առ համարձակ պաշտուի, իսկ կրօնականներուն ալ թոյլտուութիւն եղաւ իրենց պաշտօնը կատարել։

Յազկերտ մտահոգութեան մէջ էր, մի գուցէ Հայերէն յաղթուի և ամօթահար մնայ օտար բոլոր ազգերուն առջև։ Յազկերտ շատ լաւ զիտէր թէ, Հայերը Պարսիկ պետութեան մէջ ինչպիսի լաւ ծառայութիւններ մատուցած էին և զեռ կրնային ընդ երկար ժառայել։

Հակառակ Յազկերտ արքային բացորոշ հրամանին թէ, Հայոց աշխարհին կրօնքի ազատութիւնը կը չնորհէր, Հայերը չէին կրցած հաւատալ անոր խօսքերուն, խօրհելով որ դաւ մըն էր եղած խօսաւմը, Հայերը խարելու և խարեւութեան չնորհիւ իրենց նպատակները իրագործելու համար։

Կրօնքի ազատութեան լուրերը Հայաստան ալ հասան։ Ատեն մը Հայերը ուրախացան կարծելով թէ սիսանուրդք խաղա-

զութեան եղեն ընդ միմեանս աւետաւոր յարութեամբ կենարարինս : Այնպէս որ Հայերը Զատկի օրերը գտնեալ ուրախութեամբ զուարձանայինք : Եախարարները ուրախութեամբ իրենց տռուները գացած էին շատ ազ տօնի աւուրցն երթեալք էին ի տունս իւրեանց, կատարել զտօնն Զատկի առ ընտանիս իւրեանց (Փառ. 68):

451 տարուան Ա. Զատկի տօնը կը պատահէր 8 Ապրիլին, ճիշդ գարնանային եղանակին սկիզբի օրերը . . . :

Սակայն և այնպէս, վասարի Այստին միշտ արքունիքին հետ չփման մէջ զըտնըւելով, իրոզութիւնները կ'այլափախէր և կը տեղեկազրէր և ցոյց կուտար թէ, Հայերը իրենց միջն երկպառակած էին և թէ Հայերը ամէն զինով պատրաստ էին թաղկերտին կրօնափոխութեան հրամանին հընազանդելու և հպատակելու . . . :

### Ժ. Պ.

Պարզական բանակը Հեր և Զարաւանդ զաւաները կը հասնի .— Պատերազմի պարասուրիներ .— Հայկական բանակը Արտակի դաւանի վրայ .— Պատերազմի նախօրեակը .— Վարդանի նառը .— Աւարայի կարմիր նակատամարտը .— Դիւցազնական ման Քաջն Վարդանի և իր բազմաթիվ զօրավարաց և զինուորաց .— Նահանակաց բիւր .— Աւարայի նակատամարտին արդիւնքը:

Միհրներսեհի հրամանաւ, պարսկական զօրաւոր բանակ մը, Մուշկան նիւսալաւուրտ զօրավարին հրամանատարութեան տակ, Պարսկա-Հայաստանի Հեր և Զարաւանդ զաւաները կը հանէր . և նոկ յետ բազում աւուրց զօրավարին Պարսից խաղաց զայր ամենայն հեթանոսական բազմութեամբն, և եկեալ հասանէր յաշխարհն Հայոց 'ի Հեր և 'ի Զարաւանդ զաւառ» , (Ե. Յեզ. 198-99):

Պարսկական բանակը Հեր և Զարաւանդ զաւաներուն մէջ բանակելով սկսաւ պատերազմական պատրաստութեանց :

Երբ Քաջն Վարդան լսեց պարսկական բանակին Հեր և Զարաւանդ զաւաները յառաջանալը և ժամանումը ու բանակին պատրաստութիւնները, անմիջապէս լուր

զըկեց իր զինակիցներուն և ուխտապահ նախարարներուն, որ իրենց գունդերը առնելով գան Արտազու դաշտը բանակին և ինքն ալ շտապեց հան հասնիլ: Իրեն հտեւն հետզհետէ կը հասնէին և կը խմբուէին ներշապուն Արծրունի, Խորէն Խորխուռունի, Արտակ Պալունի, Վահան Ամատունի, Թաթոււ Դիմաքսեան, Արշաւրի Արշարունի, Շմաւոն Անձեացի, Տաճատ Գնթունի, Ատոմ Գնունի, Խոսրով Գարեգեան, Կարէն Սահառունի, Հմայեակ Դիմաքսեան, Ներսէն Բաջբերունի, Փարաման Մանգակունի, Արտէն Ընձայեցի, Այրուկ Ալկունի, Վրէն Տաշրացի, Ապրուամ Արծրունի, Շահ արքունի ախոռապետ, Խուրս Սրուաննձտեան:

Առոնցմէ զատ եկած էին՝ նաև Վահեւունեաց, Բշտունեաց, Տրպատունեաց, Բողեանց և Ակէացոց գունդերը, որոնց առաջնորդներուն անունները յիշուած չեն: Ամատունեաց տոհմէն Առանձար Ամատունին, իրաստուն և քաջամարտիկ զօրավարմը, իր գունդին 2000 հեծեալներով թշշնամիին ընթացքը և շարժումները լրացնելու զրկած էին և որ յաջողութեամբ իր պաշտօնը կատարելով բանակատեղին վերադառնութեան:

Ուխտապահներու բանակը Արտազու դաշտին վրայ բանակեցաւ, որ՝ ի հուց Շաւարշան կը կոչուէր, Աւարայր անունով հանրածանօթ, որ նոյն դաշտին վրայի գիւղերէն մէկն էր, որուն մօտ տեղի ունեցաւ վըճռական և մէծ ճակատամարտը: Արտազու դաշտը այժմեան Մակուի դաշտն է, որուն մէջէն Տղմուտ գետը կը հոսի: Հայոց բանակին ընդհանուր թիւը 66,000(\*)ի կը հասնէր, հետեակ և հեծեալ, բայց եթէ երբեք Հայերը բոլորն ալ միաբանէին, կըրնային 250,000-300,000 զօրաւոր բանակ մ'ունենալ:

ՊԱՐԳԵՒ Վ. Պ. ՎՐԹԱՆԵՍԵՍՆ

(Հարունակիլի՝ 8)

(\*) Ալինէր հանդէս համարուն վաթուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետեակ (Ե. Յեղանակ 187-88):

## ՊԱՏՄԱ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲՆՈՅԹԸ

ԲՆԱԳԱՆՑԱԿԱՆԸ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Հոել չեմ ուզեր թէ աւանդութիւնը պէտք է զերծ կացուցուի պատմական քըննադատութենէ. կը հաւատամ թէ պատմական քննադատութիւնը բաւական գիտական աշխատանք տարած է այս մարզին մէջ, և թէ զոյութիւն չի կրնար ունենալ արգարացում՝ մը, վերահաստատելու համար պարզապէս աւանդութիւնը պատմութիւնը մը: Խմ աւարկութիւնս այս է թէ աւանդութիւնը ներքին և անառարկելի արժէք մը ունի: Թէկ աւանդութիւնը պէտք չէ որ յենի առասպելներու վրայ, օրինակի համար Հռովմի հիմնարկութիւնը, որ քըննադատուեցաւ արդի պատմաբաններու կողմէ: Ժողովուրդի մը աւանդութիւնը կ'արժեւորուի մինչև այն ատեն երը ան կը խորհրդանշէ պատմական ճակատագրականութիւնը այդ ժողովուրդին: Այս խորհրդապաշտութիւնը էն կարեւոր ազգակին է ճարտարապետելու համար պատմութեան փիլիսոփայութիւնը և անոր ներքին նշանակութիւնը վերբերելու: Աւանդութիւնը համանիշ է պատմական կեանքի գիտութեան, որովհետեւ անոր խորհրդապաշտութիւնը կը յայտնաբերէ ներքին կեանքը և խորունկ՝ կազմաւորեալ միաւորութիւնը որ մարդ կը գտնէ իր ողեկան ինքնազիտակցութեան ընդմէջն: Այս առնչութիւնը աւանդութիւնն է պատմութեան բնագանցութեան, և կը պարունակէ մասնաւոր յարաբերութիւն մը պատմականին և բնագանցականին միջև: Այս վերջիններուն միջև ընդդիմութիւնը տիրական յղացքը եղած է գիտութեան և փիլիսոփայութեան, ինչ պէս նաև կրօնական հասկացողութեան զանազան ձևերուն մէջ.

— Հնդկականը օրինակի համար: Ասիկա խարսխուած է այն ենթազրութեան վրայ որ բնագանցականը չի կրնար արտայատել ինքինքը պատմականին մէջ, և չընդունիր որ պատմութիւնը ըլլայ աւելի քան արտաքին և փորձառական իրականութիւն մը որ, Մեթոսաբանորէն միշտ պիտի հակադրական ըլլայ բնագանցութեան:

Կ'ապացուցուի ուրեմն թէ, պատմութիւնը պէտք է հասկցուի ներքնապէս. և

թէ այս հասկացողութիւնը կախում ունի աւելի ու աւելի մեր գիտակցութեան ներքին

վիճակէն: Բայց պատմական քննադատութիւնը կ'առաջադրէ իրրե միակ զիտակցութեան իրաւ վիճակ, մակերեսային ինքնազիտակցութիւն մը: Ասով կը բացատրուի պատմական քննադատութեան սխալանքը: Ինչ որ մեծապէս առարկայական, անառարկելիի, և համոզելի կը թուի այս քննադատութեան մէջ զիտակցութեան մակերեսային խուբին համար է միայն: Բայց աւելի խորունկ մերձեցում մը կը յայտնաբերէ թէ՝ ասիկա իրաւ զիտակցութիւնը չէ որ պէտք է գտնուի պատմական իրականութեան մէջ: Երբ պատմութեան դասագիրք մը կը կարգանք, կը զգանք թէ հին ժողովուրդներու պատմութիւնը և մշակոյթը խապա պարպուած են ներքին կեանքէ և հոգիէ:

Կը պնդէի թէ Մարդուն կեանքն ու ճակատագիրը այս աշխարհի վրայ, պատմութեան թեման կը կազմէ: Բայց Մարդուն ճակատագրականութիւնը որ կը կատարելազորձ է ինքզինք՝ ժողովուրդներու պատմութեան մէջ, այսպէս ըմբռնուած է հասկցող ենթակային կոզմէ: Աշխարհի և մարդկութեան պատմութիւնը կատարելազորձւած են ոչ միայն առարկայօրէն տակոսմ-ի (ամեզերքի) մէջ, այլ՝ կատարելազորձւած են microcosm-ի (փոքրաչխարհի) մէջ: Այս երկու կատարելութիւններուն միջն եղած յարաբերութիւնը անհամար է պատմութեան բնագանցութեան, և կը պարունակէ մասնաւոր յարաբերութիւն մը պատմականին և բնագանցականին միջև:

Այս վերջիններուն միջև ընդդիմութիւնը տիրական յղացքը եղած է գիտութեան և փիլիսոփայութեան, ինչ պէս նաև կրօնական հասկացողութեան զանազան ձևերուն մէջ.

Ուրիշ տեսակէտի մը համաձայն բնագանցականը պէտք է ինքզինքը արտայայտէ պատմական եղբերով: Այս տեսակէտը մասնաւորապէս նպաստաւոր է ճարտարապետելու պատմութեան իմաստափրութիւնը,

առաջադրելով տեսակ մը պատմական կեզրոն. ուր բնագանցականը և պատմականը իրար կը զուգագիպին։ Պար փորձեմ ապացուցանել թէ բնագանցականը և պատմականը իրար կը բերուին և զուգաւորմամբ կը տարածուին միայն Քրիստոնեայի մաստասիրութեան պատմութեան մէջ։ Աւանդութեան յղացքը իրբե ամենախորունկ արտայայտութիւնը պատմական և ոգեկան իրականութիւններուն, կախումունի ներքին կեանքին ընկալչութիւնէն։ Մարդկային ոգիին ուժացումը աւանդութենէն, պիտի նշանակէ արտաքին պարտագրանք մը. բայց պարտինք աւանդութիւնը ընդունիլ իրբե մարդուն ներքին, ազատ և ոգեկան կապը, իրբե բան մը որ ոչ անդրանցական է և ոչ ալ պարտագրեալ է իր վրայ իրբե մնայուն, կայուն (immanent), Ասիկա միակ աւանդութեան յղացքն է որ կը պարունակէ իմաստասիրութեան իրաւխարիստ մը։

Պատմութեան էութիւնը բաղկացնող հարցին մատնեանք ուրիշ հայեցակէտէ մը։ Ի՞նչպէս ծագում առած է և Պատմութեան զաղափարը մարդկային հասկացողութեան մէջ։ Ի՞նչպէս մարդկային հասկացողութիւնը ըմբռնած է պատմութեան պրօցէսը և կատարելութիւնը։ Թէ ի՞նչպէս զոյութիւնի ունի հանապազօքեալ իրականութիւն մը, որուն կ'ըսենք պատմական աշխարհ, պատմական շարժում (movement) և պատմական պրօցէս։ Այս հարցումներուն պատմախոներու համար, պիտի երթանք Հելլենական և երրայական շրջաններուն։

Թէ Հելլենական և թէ Երրայական սկզբունքները կը ներմուծուին Երրապական հասկացողութեան Ահանանագրութեան մէջ, անոնց օրկանիք միութիւնը Քրիստոնեայ աշխարհի մէջ օժանդակած է սկիզբը ընելու նոր պարագրջանի մը։ Կը խորհիմ թէ ո և է պատմութեան ուսանողի մը համար յստակ է թէ, Հելլենական մշակոյթին և հասկացողութեան կը պակսէին պատմութեան sense-ը։

Նոյնիսկ մեծագոյն յոյն իմաստաերները գիտակից չէին պատմութիւնը իմաստասիրելու կարելիութեան։ Ոչ Պղատոն և ոչ Արիստոտէլ և ոչ միւս մեծ իմաստաէրներէն մին ձգած է պատմութեան յղացք մը մեզի։ Ասիկա կը խորհիմ թէ

արդիւնքն է այն կերպին որով յոյները մեկնեցին աշխարհ։ Անոնք գեղեցկագիտութէն կը նայէին աշխարհին իրբե դաշնաւոր և սահմանաւոր տիեզերք մը։

Են ներկայանալի Հելլէն մատածողները, ստեղծագործութիւնը յղացան իրբե կայունութիւն, իրբե տեսակ մը զասական հայեցողութիւն, լաւագոյնս կազմակերպուած տիեզերքի մը։ Հելլենական հասկացողութիւնը երբեք չզբաղեցաւ ապագայով, որուն մէջ պատմութիւնը պիտի կատարելագործէր ինքզինքը։ Այս ապագայապաշտ տեսակէտը չէր պարունակէր ընդհանրապէս պատմական պրօցէսի հասկացողութեան հիմ մը, և մասնաւորապէս տեսակաբար տուամայ մը։

Որովհետեւ պատմութիւնը տուամ մըն է որ ունի իր արարները և տրամաբանական զարգացումը։ Բայց պատմութիւնը իրբե եղերերգութիւն։ Հելլէն հասկացողութեան օտար էր։ Ասոր ծնունդը պէտք է աւելի փնտուի հին Խորայելի հասկացողութեան և ոգիին մէջ։ Հրեաներն էին որ առաջին անգամ յղացան աշխարհը իրբե պատմական կատարելութիւն ի հերքում յոյներու չըջանային պրօցէսին։ Հին Երրայեցիներուն համար կատարելութեան զաղափարը սերտօրէն առնչուած էր Մեսիական զաղափարին հետ։ Հրեայ հասկացողութիւնը, ոչ նման յոյներուն, միշտ կը նայէր ապագային, անոնք կ'ապրէին ակընկալութեամբը մեծ և գնառական դէպքի մը որ պիտի գար հրեայ կամ ուրիշ ժողովուրդներու կեանքին մէջ։ Հրեաներուն համար պատմութեան զաղափարը կը նշանակէր ապագայ դէպքի մը ակնկալութիւնը որ պատմութեան լուծումը պիտի բերէր։ Ապա ուրեմն պատմութեան իմաստասիրութեան սկիզբը պիտի փնտունք աւելի Երրայական քան թէ յոյն փիլիտոփայութեան մէջ։ Ներօլս. ՊէրՏիԱկէվ Թրզմ.

ԶԱԼԻՆ ԱԲԴ. ԶԻՆՉԻՆԵԱՆ  
(Ճարունակելի)



**Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻԿԻ****ՀԵՌԱԳԻՏՐԱՆԵՐ**

Քիր. Տ. Եղիշ Ա. Արք. Տերերեան  
Պատրիարքական Տեղապահ  
Առաք. Ա. Արուսոյ  
Երուսաղեմ

Անակնկալ եւ կոկծալի մաճք Եւրոպայի Հայոց Կաթողիկոսական Նուիրակ Գիր. Տ. Արտաւագդ Ս. Արք. Սիւրմէեանի մեզի խոր ցաւ պատճառեց. կը հրահանգենիք մատուցանել հանգստեան հանդիսաւոր Ս. Պատարագ, յարգել իր յիշատակը ներկայացնելով իր գրական, բանասիրական, եկեղեցական, վարչական եւ ազգային ծառայութիւնները: կը հայցենիք Ս. Հոգիին միսիթարութիւնը իր արենակիցներուն, հօտին, եւ համայն եկեղեցական դասուց:

**Գլուխ Զ.****ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

10 Հոկտ. 1951

Ս. Էջմիածին - Հայաստան

Արտաւագդ Մթբազանի մահուան առքի Փոխանակուած նեռազիրեներ

Բարիք, 28 Սեպտ. 1951

Հայոց Պատրիարքարան

Երուսաղեմ

Հայ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը կը լիծով կը տեղեկացնէ մահը՝ Սիւրմէեան Սրբազանի որ տեղի ունեցաւ կարճատև հիւանդութենէ մը վերջ, 27 Սեպտեմբեր ժամը 14 ին:

**ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ**

Երաւանեամ, 29 Սեպտ. 1951

Հայ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւն

Բարիք

Սրբոց Յակոբիանց Միաբանութիւնը եւ խորունկ ցաւով տեղեկացանք Սիւրմէեան Սրբազանի անսպասելի մահը. Տէրը թող դասէ իր հոգին անմահներու կարգին:

**ՍՈՒՐԵԼՆ ԵՊԻՍԿՈՊՈՅՈՍ**  
Վասն Պատրիարքական Տեղապահի

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԿՏ - ԲԵՐԵԿԵՄԱՐ

● Կիր. 2 Սեպտ. — Ը. օր Ականիման. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան Երաշխաւոր Ս. Աստուածածին մատուան մէջ: Օրուան պատարագին էր աւանդական սովորութեան համաձայն Ս. Յարութեան Տաճարի Տեսուչը՝ Հոգ. Տ. Հայկասեր Վրզ. Պայրամեան, և քարոզեց բնաբան ունենալով՝ Առակաց գրքէն անմասանը՝ խուլ, կոյր և համբ է:

● ԲՀ. 3 Սեպտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գիր. Տ. Առարքն Ս. Ազու. Քէմանձնանի:

● ԳՀ. 4 Սեպտ. — Ս. Ցովակիմայ եւ Աննայի. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Յովսէփի Գերեզմանին վրայ: Պատարագեց և քարոզեց աւանդական սովորութեան համաձայն Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Կարեգին Արեդայ Քաջանենան:

● Եր. 8 Սեպտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գիր. Տ. Տեղապահ Ս. Հոգ:

● Կիր. 9 Սեպտ. — Գիր Գօւույ Ս. Աստածանի. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Գեթեմանին Ս. Աստուածածնայ Տաճարի Ս. Կոյսի Գերեզմանին վրայ: Պատարագին էր Հոգ. Տ. Պարուժան Արք. Քայաբառանեան Հանգիստաւոր երթին և վերտարձին կը նախագահութեամբ Գիր. Տ. Առարքն Ս. Ազու. Քէմանձնան:

● Կիր. 16 Սեպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատան մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Հայրիկ Վրզ. Ասլաւանեան:

● Եր. 20 Սեպտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին հանգիստաւոր նախատօնակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գիր. Տ. Առարքն Ս. Արք. Մանասեանի:

● Ուր. 21 Սեպտ. — Ենթան Ս. Աստածանի ի յԱննակ. առաւտօնեան ժամը 8ին, նախագահութեամբ Գիր. Տ. Առարքն Ս. Արքազանի, հօգեշնորհ վերգապետ Հայրեր պաշտօնական թափօրույ իշան Գեթամանին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր յետ է Հրաշավառաջ հանգիստաւոր մաւրիքն Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ հանգիստաւորապէս պատարագեց Գիր. Տ. Առարքն Ս. Արք. Մանասեան, իսկ Հոգ. Տ. Հայկասեր Վրզ. Պայրամեան քարոզեց օրուայ տօնին խորհուրդին Հուրդ:

● Կիր. 23 Սեպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Յարութեան Վրզ. Մուշեան:

● Եր. 29 Սեպտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին մեծ ահանգէ ո նախատօնակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գիր. Տ. Նորայր

Ս. Եպս. Պաղաքեանի, իսկ յետ նախատօնակի Ս. Խաչափայտի մասունքը իր հանգստարանէն թափորով աւագ խորան փոխադրուեցաւ, ուրիշ հանդիսապետ Արքազանը որհնեց ներկայ հաւատացեալներու հոծ բազմութիւնը:

Իրիկնամուտին Ո. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցան և կեսցէ ու և Հակոնն արարող թիւները, հանդիսապետութեամբ Գերազատիւ Տ. Նորայր Արքազանին:

● Կիր. 30 Սեպտ. — Խաչիլեաց. Հանդիսաւոր Ս. Պատարազը մասուցաց եցաւ Ո. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ՝ Պատարազին էր Գեր. Տ. Նորայր Ս. Եպս. Պողաբեան, որ նաև քարոզեց ընարան ունենալով չըր ոչ առնու զիանչ իւրի գայ զիւի իմ, չէ ինձ արքանից: Յետ քարոզի, նախազահութեամբ Գեր. Տ. Առորէն Ո. Եպս. Քէմհաննեանի, կատարուեցաւ Հայրապետական Մազմանը, ն. Ո. Օ. Տ. Գերոգ. Զ. Աղզընակի վեհափառ Կաթոլիկոսի անուանակոչութեան տանին առթիւ (ըստ նոր տօմարի), իսկ յետ Ո. Պատարազի, զարձեալ նախազառութեամբ Գեր. Տ. Առորէն Ո. Եպս. ի. Հանդիսաւոր Հոգեհանգստան ովաշտան Մելքոնեան Հարազատաց Կարապետի և Գրիգորի, ինչպէս նաև Նորոգ Հանդ. Խերազայի Կաթող. Նուրիսակ Գեր. Տ. Արուաւզդ Ս. Արք. Արքմէնեանի հոգւացն ի Հանդիսաւոր Երեկոյեան Ո. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչիլեացի մեծահանգէս անդաստանը, նախազահութեամբ Գեր. Տ. Առո-

րէն Ս. Եպս. Քէմհաննեանի, և մասնակցութեամբ Արքազան Եպիսկոպոսաց, վարդապետաց, բովանդակ ուսանողութեան և հաւատացեալներու խուռաներամբ բազմութեան, որով կը յարդէր Մայր Տաճարը մինչեւ իր գաւիթները:

Պ. Ա. Շ Տ Օ Ն Ո. Կ Ա. Խ Ք

● Եր. 15 Սեպտ. — Կ. ա. Ժամը 10.30-ին, Lord Stansgate (Chairman of the International Parliamentary Union), իր տիկնոջ հետ միասին այցելեց Գեր. Տեղապահ Ս. Հօր և հիւրասիրուեցաւ Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ:

● Դէ. 19 Սեպտ. — Կ. ա. Ժամը 11.30-ին, Գեր. Տեղապահ Ս. Հօր այցելեց տեղայոյ Ամերիկան Ընդհանուր Հիւրասիրուեցաւ Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ:

● Դէ. 25 Սեպտ. — Կ. ա. Ժամը 9ին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը: Ընկերակցութեամբ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արք. Մանասեանի, Տնօրէն Ժաղավոյ անզամ Հոգ. Տ. Պարզի Վազ. Վրթանէսեանի, Ցոպպէի Վանուց Տեսուչ Հոգ. Տ. Բարզէն Վրզ. Ազատեանի և կալուածական Քարտուղար Տիւար Կարպի Հինգիեանի, Նոր Երուսաղէմ մեկնեցաւ զրազիւս կալուածական խոզիրներով և տաւու համար իր անզը անիկ եպիսկոպոսական այցելութիւնը հարցելանայ գաղութին, և վերազարձաւ էլ. Հակո. ի կ. ա. Ժամը 9ին:

## ՀԱՆԳԻՍ

### ԳԵՐ. Տ. ԱՐՏՈՒՐՉԱԶԴ Ս. ԱՐԹԵՎՈՅ. ՍԻՒՐՄԷԵԱՆԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՅ

Ամենադառն յուզումով ու բեկումով վերահասու եղան Ս. Սթոռոյ Գեր. Տեղապահ Արքազանն ու բովանդակ Միարանութիւնը Նորին Արքազնութեան մահուան գոյժին, որ տեղի ունեցած է 27 Սեպտ. 1951-ին Բարիզի մէջ «յետ կարճատեւ հիւանդութեան»:

Անհակնակալ մահուան ցաւը աւելի կը խորունկնայ մեր մէջ մանաւանդ այս օրերուն ուր աւելի քան զգալի է հայ եկեղեցական անդաստանին ծեռնահաս եւ փորձառութեամբ լիցուն մշակներուն պակասը. Հանգուցեալ Արքազանը այդ տեսակէտով կը ներկայանայ իրեւ տէրը բազմազիմ արքէքներու թէ հոգեւորական եւ թէ մտաւորական կալուածներու մէջ: Կուտանը իր կինսագրականը օգտուելով մեծանուն գրագէտ Արշակ Զապանեանի մէկ յառաջաբանէն, զետեղուած հանգուցեալ Արքազանին «Թշուառի Զգայութիւններ» հասորին սկիզբը:

Նորին Արքազնութիւնը ծնած է Ակն 18.9-ին, ու զարմիկն էր նահատակ բանաստեղծ Ատոմ Եարճանեանի (Միամանթօ): Իր նախնական ուսումը ստացած է Պոլիս Պատրգէօյի Արամեան Վարժարանին մէջ (1897-1904) եւ ապա աշակերտած Կալկաթայի Ազգային Վարժարանի (1904-1907) ուր եւ իսկ կատարած է իր զրական առաջին փորձերը որոնք հրատարակուած են Արևելք օրաթերթին, «Փունջ» եւ «Մաղիկ Մանկանց»

շաբաթաթերթերուն մէջ : 1908-ին կը հրատարակէ «Հայրենի Քնար» շաբաթաթերթը, որը ետքը կը շարունակուի իրրեւ «Սասուն» ամսագիր : 1909-ին Կ. Պոլսոյ Կարապետեան Վարժարանէն ներս կը ստանձնէ ուսուցչական պաշտօն եւ ապա (1910-ին) կը վարէ Էսկի Շէնիրի Ազգ. Վարժարանի տեսչութիւնը, ուր կը ճիմնէ նաև գիշերօթիկ վարժարան, նոյն օրերուն կ'աշխատակցի նաև «Աշխատանք» «Ժամանակ» եւ «Նոր Լուր» օրաթերթերուն Խօսի կիղծանունով :

1918-ին ինքնայօժար մատուցմամբ կ'ընդգրկէ եկեղեցական լուծը<sup>7</sup>, Կ. Պոլսոյ մէջ ծնննադրուելով վարդապետ Գալէմբեարեան Սրբազնէն, ու իր առաջին գրքը կ'ըլլայ նուիրուիլ աղջտահար ժողովութիւն ծառայութեան, ստանձնելով Գոնիայի 300.000 թլը-ուառ գաղթականներու հովուութեան պաշտօնը : 1920-ի Քէմալական կառավարութիւնը կ'աքսորէ զինք երգում, ուր այս նուիրեալ եկեղեցականը կը գտնէ դարձեալ օգտակար հանդիսանալու առիթը երգում կեդրոնացած 10.000 Հայ գերիներուն եւ զինուորականներուն : 1922-ին կ'անցնի Պոլիս ուր կը գործէ որպէս ուսուցիչ եւ քարոզիչ, նոյն ատեն կ'աշխատակցի «Հայ Խօնակ» ամսաթերթին : 1924-ին կ'ընտրուի առաջնորդ Հաւէպի Հայոց : 1929-ին կը ծեռնապուի եպիսկոպոս Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Սահակ Խապայեան Կաթողիկոսէն, իսկ 1932-ին կը ստանայ Արքութեան տիտղոս Երջանկայիշատակ Տ. Սահակ եւ Տ. Բարգէն աթոռակից՝ Կաթողիկոսներէն : 16 տարիներ Հաւէպի առաջնորդութիւնը վարելէ ետք, 1940-ին Բարիզի վախճաննեալ առաջնորդ Քիպարեան Վռամշապուհ Արքապարէն կ'ընտրուի առաջնորդ Ֆրանսայի, Պելճիքայի եւ Զուիցերիոյ հայոց : 1959-ի Համաշխարհային Պատերազմը արգելը կը հանդիսանայ իրեն ստանձնելու այդ պաշտօնը եւ հետեւարար 1942-ին կը ստանձնէ Պէյրութի Հայոց առաջնորդութիւնը : 1945-ին կը մասնակցի Ս. Էջմիածնի ազգային-եկեղեցական մեծ ժողովին : Ամենայն Հայոց նորընտիր Հայրապետը իրեն կը վստահի Ս. Էջմիածնի հեմարանին վերատեսչութիւնը եւ սակայն ետքէն յարմարագոյն կը նկատէ իրեն յանձնել Արևմտեան Եւրոպայի Հայոց թեմը, ուր կը պաշտօնավարէր որպէս Պատուիրակ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան :

Հանգուցեալ Սրբազնը վերեւ յիշուած իր բոլոր պաշտօնավարութեանց ընթացքին ի յայտ եկած էր որպէս գործունեայ, նախանձախնդիր, եկեղեցասէր ու հայրենասէր անձնաւորութիւնն : Պոնիայի իր հոգեւոր հովուութիւնը եղած էր բացարձակ նրբիրումի եւ զոհողութեան յանձնառութիւնն մը, Հաւէպի ու Պէյրութի մէջ, որպէս բազ ֆրանսագէտ ու կենցաղագէտ հովիւ, ոչ միայն իրեն հետ ունեցած էր իր հօտին վրատահութիւնը այլև համակրանքը ու յարգանքը օտարեներուն ու պետական, հիւպատուսական ու յարանուանական շրջանակներուն, յաջ անոնց արժեւորելով մեր ժողովուրդն ու անոր զանազան ազգային իրաւունքները, նոյն ատեն ապահովելով նաև իրեն յանձնուած թեմերուն ազգային, կրօնական ու հասարակական ներքին վերակազմութիւնը, եկեղեցներու շինութիւնը եւլն : եւլն :

Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակութեան իր շրջանին թերաւ աշխատանքի սրտեւանդն ու կարեւոր բաժինը Բարեգործականի ներզագիր հանգանակութեան, ինչպէս նաև Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանուց ի նպաստ հանգանակութեան :

Սրտաւազգ Սրբազն անխոնց աշխատող մ'եղաւ գրական գետնի վրայ ի յայտ բերելով տքնազան բանասէրի եւ զրագէտի յատկութիւններ : Գրական գետնի վրայ ան կը ներկայանայ իրեւ հեղինակ լայնածաւալ ու կարեւոր աշխատութիւններու ինչպէս .

Էրբողուլ. — Պատմական նիւրերու վրայ գրական էջերու հաւաքածոյ մը : Տարեւ . — Վեց հատու գրական բանախրական տարեզիրեն : — Պատմուին Հավեպի Հայոց, Երկու մեծածաւալ հատութեր . — Ցուցակ Հայ Զեռագրաց Հակեպի Ա. եւ Բ. հատուներ : — Նկարագիր Օքին Թագաւորի ձեռագիր ժամարգին : — Բառարան Ս. Գրական Յատուկ Անուանց Ա. հատուր : — Սուրբիա, պատմա-բանասիրական աշխատուրին : — Ցուցակ Հայ Զեռագրաց Եւրոպայի եւ մատնաւորաց : — Ցուցակ Զեռագրաց Ս. Յակոբեանց Վանուց

Խրուսաղեմի Ա. հայոց : — Թուլառի Զգայութիւններ գրական հատու մը , եւ շաբթ մը մանր բայց արժէքաւոր պրօշիւոններ պատմա-բանասիրական նիւթերու շուրջ :

Արդիւնաւոր այս Եկեղեցականին կորուստին առթիւ ցաւով միայն կ'անդրադառնանք այն բոլորին որոնք դառնացուցին իր կեանքը եւ փութացուցին գուցէ իր մահը :

Կ'աղօթենք ի բոլոր սրտէ որ Տէրը լուսաւորէ Եկեղեցւոյ եւ ազգին հաւատարիմ արժանաւոր այս Եկեղեցականին հոգին եւ անոր փոխարէն յարուցանէ Հայ ժողովու արժանաւոր այս Եկեղեցականին հոգին եւ անոր փոխարէն յարուցանէ Հայ ժողովու ու Եկեղեցին ճշմարիտ ծառայութեան նոր ու անկաշառ մշակներ :

## ՏԻԿԻՆ ՎԵՐԳԻՆԷ ՔԷՕԼԷԵԱՆ

Խորունկ ցաւով իմացանք մտիր այս պատուական Տիկնոց , վախճանած իր գեղեցիկ դղեակին մէջ , ի նիս : Մանրամասնութիւններ չունինք իր մահուան պարագաներէն , հայ մամուլը արձագանք չեղաւ իր կեանքին , եւ սակայն Տիկ . Վերգինէ Քէօլէեանը չէր այն մանկանացուներէն՝ որոնց գազալին կամ մահագոյժին առջեւէն կարելի ըլլայ անցնիլ , առանց զգալու ցաւը որ իր մահով կը պատճառուի :


Ոնխառն կրօնամիրութիւնը՝ զոր ճշմարիտ պարկեշտութիւնը միայն կրնայ ծնիլ կնոց մը սրտին մէջ , եւ անխստրական անծնութիւն մը՝ զոր քրիստոնէական դաստիարակութենէն յանախ կրնայ ստանալ մարդս , իր նկարազրին ամէն բացորոշ գիծներն էին : Եւ ինք այս սեռն եւ սերտ զգացումներով , միշտ կապուած մնաց Հայ Եկեղեցին , հայ բարեզործութեան , հայ կրթութեան , եւ սրտագին բարեկամը անոնց անծնուէր մը շակներուն :

Իզմիրցի այս պատուական հայունին , իր ամուսնոյն մահէն յետոյ , շնորհի իր կորովի նկերուն եւ ճարտարութեան , քառապատկած էր ամուսինէն իր ստացած հարստութիւնը , բամբակի առեւտուրին մէջ , յետոյ իր յառաջացած տարիքին հնտեւանքով , իր բոլոր ունեցածը արժեթուղթերու , չէնքի եւ դրամազլուխի վերածած , ու առանձնացած նիսի իր դղեակը , իր ծերութեան օրերը կ'ապրէր մատնակից սակայն միշտ , ազգային կարիքներու :

Երուսաղեմի Հայոց վանքը իր սիրած Հաստատութիւններէն մին մնաց միշտ , եւ տակաւին իր կննդանութեանը , երանաշնորհ Դուրեան պատրիարքի օրերուն , վանքին կտակած էր տասը հազար Սթերլին , խնդրանքին վրայ եղերամահ Դեւոնդ Արք . Դուրեանի :

Մանէն վերջ , բացուած է իր կտակը , ու մեզի կը հաղորդուի թէ հոն անփոփոխ կը մնայ Ս . Աթոռոյս բաժինը : Երախտապարտ զգացումներով կը սգանք իր մահը , աղօթելով որ լոյսերու մէջ հանգի հոգին Ս . Աթոռոյս բարերարունիին , ու չափակին իր նմանները մեր ժողովուրդէն , որոնց շնորհիւն է որ հաստատ եւ լուսաւոր կը մնան մեր ազգային , կրօնական ու կրթական Հաստատութիւնները :

Հանգիստ իր հոգիին :



Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

## Վ. Ա. ԱՆ Բ Ա Ր Գ Ա Խ Ա Ծ Մ Ա Ն «ՍԻՐՆ»Ի

Ամերիկային Մեծ Տիարական կազմիկան «Սիրն»-ի բարզաւաճման համար կը նույրէ Ամերիկան նինգ (5) տղար, ձեռամբ Հոգ. Տ. Մասոց Արդ. Քարթլուսեանի:

Կը յայտնենի մեր ընորհակալուրիները յարգելի նույրատուին:

Վարչուրին «Սիրն» Ամսագրի

«ՍԻՐՆ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԹԻՒՆԸ ԵՒ ԿԻԽԼՓԵԿԿԵԱՆ ՄՈՏԵԿԱԳՐԱԿԹՈՒՆԸ  
ՃՆՈՐԾԱԿՈԼԱԽԹԵԱՄԲ ԱՏՈՅԱԾ ԵՆ ՀԵՏԵԽԵՈԼ,  
ՀՅՈՍԱՐՈԿԱԽԹԻՒՆԵՐԸ

ՄԵՂՔԸ, Սահման Զօրեան: Հրատարակութիւն Ս. Դ. Հ. Երեւան Երիտ. Միութեան: Մատենաշար «Երեւան» թիւ 2: Գահիրէ, տպ. «Նուպար», 1946, էջ 46: (Երկու օրինակ): Նուէր Ս. Դ. Հ. Երեւան Երիտառարդաց Միութենէ:

ԱԷՅՑԻՔ ԻԱԽՀԱԿՈՒՆԻ, Զարուհի Մալկունի: Հրատարակութիւն Ս. Դ. Հ. Երեւան Երիտ. Միութեան: Մատենաշար «Երեւան» թիւ 1: Գահիրէ, տպ. «Նուպար», 1946, էջ 31: (Երկու օրինակ): Նուէր Ս. Դ. Հ. Երեւան Երիտ. Միութենէ:

ա) ԻՐԱՆԵԱՆ ԳԵՂՉՅՈՒԿ ԵՐԳԵԲՐ, (Երրորդական ձայնագրութեամբ), (2 տետրակ): Գրեց Ռուբեկի Գրիգորեան: Թէհրան, Իրան, 1949 և 1951, էջ 12 և 38:

բ) ԳԱՇՆԱՄՈՒԻՐԻ «ՄԲԷՐՑՈ» գրեց Ռուբեկի Գրիգորեան: Թէհրան, Իրան, տպ. «Բամալի», 1950, էջ 6: Նուէր Ռուբեկի Գրիգորեանէ:

ԵՐԿՈՒ ԵՐԳ, Լ. Գրիգորեան, (Երրորդական ձայնագրութեամբ): Թէհրան Իրան, տպ. «Մոժերն», 1946: Նուէր Ռուբեկի Գրիգորեանէ:

ՔՐԻՍՏՈՆԻ ԵՈՒԹԻ ԽՈՒՔԵՐԸ, (աղօթերգ), Թէոսոր Տիւպուա: Պէյրութ, տպ. «Կ. Տօնիկեան», 1942: Նուէր Սահմակեան Բարձր: Վարժարանի տնօրինութենէ:

ՄԱՆԱՌՈՒԹԵԱՆ ՄԵԶ ԵՒ ԳԻՒՂԻՆ ԹԻԹԵՄՆԵԿՐ, Բ. Ժիրայր: Հրատարակութիւն Սահմակեան Երկսեռ Վարժարանի թիւ 1: Պէյրութ, տպ. «Կ. Տօնիկեան»: Նուէր տնօրինութենէ:

ԿԱՆԱՌԱԳԻՐ ԱԶԳ, ՍՈՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ: Հրատարակութիւն Ազգ. Սահմակեան Երկսեռ Վարժարանի թիւ 2: Պէյրութ, տպ. «Կ. Տօնիկեան», 1935, էջ 23: Նուէր Վարժարանի տնօրինութենէ:

## ՄԱՄԱՅ ՏԱԿ Ե

Բանակեր - Հայկաբան - Պատմաբան՝ հանգուցեալ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲԻԿԵԱՆԻ

Երկասիրուրինը, պատկեալ Խզմիւեանց Գրական Մրցանական

ԲԱՐԳԻՐՔ ՍԵԲԱՍԻՆՈՅ ԳՈՒԱՌՈԼԵԶՈՒ

Ա. — Զայնաբանուրին եւ Զայնախօսուրին Անքասահայ բարբառի.  
Բ. — Բառզիրք Անքասահայ Կաւառալեզուի. Գ. — Ժողովրդական առածք, հանելուկներ, վիճակ, բաղդասելութեներ, ոււտասելութեներ, բառախաղեր, աղօրքեներ, մանիկներ, տալեր, պարերգներ, օրերգներ, անէլքրոներ, առակներ, հէֆիարներ, տեղական անուններ, ցանկ՝ յատուկ անուններու եւ Սեբաստահայ մականուններու եւայն, եւայն:

# ԿԱՅՈՒԱՂԲԻՒՐ

Մանկավարժական Քերական - Ընթերցարան, Հայու Լատինական տառերով, հրատարակիչ Յովհ. Մամասեան, տպգ. Վճնաբիկ 1949, էջ 186:

Յարդելի նրատարակիչը սոյն գրքեն օրինակ մը զրկոծ է Խմբագրութեանս, խրնջուղով իր նրատարակութիւնը ծանօթայթել Հայ հասարակութեան: Կ'ընդառաջենք իր փափակին արտադրելով գործին յառաջորանք, ուր կը պատկերանան անոր նրատարակութեան նպատակն ու բաժանումները:

Այս ձեռնարկին առքիւ կը ընօհնութեան յարցոյ նրատարակիչը ու կը յայտնենք մեր գոհումակութիւնը նիզին նամաւ որ կատարուած է գաղութանայ մասադ սերունդներու Հայեկնի դաստիարակութեան ի խնդիր:

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս Քերական - Ընթերցարանը յօրինուած է ամերիկահայ մանուկներու և պատանիներու համար, որոնք թէեւ գրաւեն անգղիերէն կարգալ ու գրել, բայց ծանօթ չեն հայերէն գրերուն: Երկու մասերէ կը կազմուի: Առաջինը կը պարունակէ Քերական - Ընթերցարանը: Օգտագործելով Մ. Առշթանեանի «Բարի լոյս» քերականը, «որ պատրաստուած է մանկավարժական օրէնքներու համաձայն», հայերէն հեղումներուն և ընթերցումներուն դէմ՝ միւս էջին վրայ, գրած ենք նայները լատինական տառերով: Հայերէն հեղումներուն և ընթերցումներուն անգղիերէնի փոխարկումը սիրայօժար կառարած է Տիոր Արա Շիրազեան, որու մեծապէս շնորհապարտ ենք: Ուր որ կարելի եղաւ դրինք ձեռագիր օրինակներ, որպէսզի աղաք միաժամանակ վարժուին նաև գրելու արուեստին: Դրքին սկիզբը զետեղուած է հայ այրութենք, ամէն մէկ գրին քով դնելով լատինական համապատասխան գիրը՝ անգղիերէն հնչումով:

Տիոր Արշակ Մահտեսեան ոչ միայն ամբողջապէս քննութենէ անցուց սոյն աշխատանքը, այլ նաև գրեց անգղիերէն լեզուով յառաջարան մը, ուր կը խօսուի հայ լեզուի հարստութեան անոր կատարած գերին ու մեր լեզուով միայն պահուած ու փոխանցուած օտար հեղինակներու գործերու մասին:

Երկրորդ մասը կը կազմուի ամբողջապէս հայ - անգղիերէն բառզրքէն: Տիոր ի. Ա. Երան իր յօրինած Բառարանը ազնուօրէն մեր արամագրութեան տակ գրաւ, և մենք հաս կը յայտնենք իրեն մեր ջերմ շնորհակալիքը: Այս բառզրքը մեծապէս պիտի նպաստէ ընթերցումներուն մէջ գտնուած բառերուն հասկացողութեան համար:

Այս աշխատութեամբ մեր նպատակն է եղած լոկ նպաստել անոնց, որոնք թէեւ օտար միջավայրի մէջ ծնած են ու օտար զպրցներ կը յաճախեն, բայց նախանձախնդիր իրենց աղղային զգացումին և պատւոյն, կ'ուզեն հայ մեալ ու հայերէն սորզիլ: Մայրենի լեզուն մեծագոյն գանձը և հոգեկան հարստութիւնն է որ մեր Հայրերը մեզի ձգած են, անոր ծանօթութիւնը ամենէն ազգու և ատակ միջոցն է աղղապահապատճին: Եթէ այս Քերական - Ընթերցարանը կարենայ հրապութել մեր փոքրիկները որ սիրեն մայրենի լեզուն, փարին անոր ու սորզին զայն, ասիկա պիտի ըլլայ մեր ամենամեծ կոհունակութիւնը:

ՀՐԱՍԱՐԱԿԻՉԸ